Azg
armenian daily

3 ՆՈՅԵՄԲԵՐ 1999 ՇԱԲԱԹ 195 (1931)

Ադրբեջանի շահերը պետք է պաշտպանված լինեն կարգավորման ցանկացած տարբերակում

Հայտարարել է Թուրքիայի նախագահը

ԱՆԿԱՐԱ, 2 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՆՄԲ: Ադրբեջանի շահերը պետք է պաշտպանված լինեն Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ցանկացած տարբերակում, հայտարարել է Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը:

Նախօրեին ելույթ ունենալով Հեյդար Ալիեւին «Աթաթուրքի անվան խաղաղության ամենամյա մրցանակի» հանձնման արարողության ժամանակ Դեմիրելն ասել է, որ հակամարտությունը պետք է կարգավորվի առանց ժամանակ կորցնելու, սակայն իրապես պաշտպանելով Ադրբեջանի շահերը:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«Միասնությունը» վերախմբավորվում է

ՀԺԿ թեկը հաստատական է՝ Արմեն Խաչատրյանը խորհրդարանի նախագահ

«Միասնություն» խմբակցության համար նոյեմբերի 2-ը թեժ օր էր: Արյունոտ հոկտեմբերի 27-ից հետո խմբակցությունը «Կայունություն» խմբի հետ մեկտեղ ստիպված էր քաղաքական լրջագույն քննարկումներ ծավալել՝ վերահաստատելու ճեղքվող փոխվստահությունը, որպեսզի ավելորդ լարվածություն չառաջանա: Նախագահի հրամանագրով եւ ԱԺ բոլոր խումբ-խմբակցությունների, անկախ պատգամավորների առաջարկությամբ հրավիրված ԱԺ արտահերթ նստաշրջանը բացվեց 17:00-ին, բայց մինչ կեսօր ԱԺ խոսնակի «Միասնության» թեկնածուն Անդրանիկ Մարգարյանն էր: Ժողովրդական կուսակցությունը, սակայն, վճռական էր պահպանելու ստատուս-քվոն: Խորհրդարանի զրկված խոսնակը եւ փոխխոսնակը Ժողովրդական կուսակցության անդամներ են եղել, ուստի նրանց իրավաժառանգորդները պետք է կուսակցական նույն պատկանելությունը ունենան: Ըստ ամենայնի, Անդրանիկ Մարգարյանի թեկնածության փոխարեն Արմեն Խաչատրյանի առաջադրումը եւ պաշտպանությունն արդյունք է նաեւ «Երկրապահի» եւ բանակային շրջանակների դիրքորոշման, որոնք Անդրանիկ Մարգարյանին գրեթե անվստահություն էին հայտնել նախագահ Ռոբերտ Քոչարյանի հանդեպ վերջինիս անհետեւողական պահվածքի պատճառով: Արմեն Խաչատրյանը ՀԺԿ-ին առավել մերձեցրեց Վազգեն Սարգսյանի իրական հենարանը համարվող ուժային շրջանակի հետ, ինչը փաստում է, որ կուսակցությունը, չնայած արհավիրքին՝ Կարեն Դեմիրճյանի եղերական սպանությանը, կարող է ոչ միայն չսասանվել, այլեւ ամրանալ:

Տես էջ 2

ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Կասկածների ու ենթադրությունների առիթ չտանք

ՄԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բոլորն էլ գիտեն, որ նախաքննության նյութերը հրապարակման ենթակա չեն եւ դա ընդունելի է սովորական քրեական գործերի դեպքում: Սակայն մեզ հետաքրքրող՝ հոկտեմբերի 27-ի դեպքը, շարքայիններից չէ եւ պարտադրում է դուրս գալ սանդարտ շրջանակներից, որովհետեւ գաղտնիությունը երբեմն քողարկում ու խորհրդավոր է դարձնում եղելությունը: Այդպիսի իրավիճակ է այժմ ստեղծվել հինգ ահաբեկիչների քրեական գործի շուրջ:

Արտասահմանյան երկրներում լրատվամիջոցներն ահաբեկչության ցանկացած դեպքի, այդ թվում նաեւ քաղաքական գործիչների սպանության նկարագրությունն սկսում են ահաբեկիչների լուսանկարներն ու նրանց հնարավոր կենսագրական մանրամասները հրապարակելուց՝ երբեմ էլ չմտածելով, թե դա կխոչընդոտի կամ բացասաբար կանդրադառնա քննության ընթացքին: Ավելի քան 7 օր է անցել սահմռկեցուցիչ դեպքից, սակայն իրավապահ մարմինները դեռեւս նոպասակահարմար չեն գտնում նրանց ոչ լուսանկարները ցուցադրել, ոչ էլ որեւէ տեղեկություն հաղորդել: Դա չի անում նաեւ հեռուստատեսությունը, իհարկե՝ ոչ նյութի պակասից: Եթե ահաբեկիչներից չորսը հանրածանոթ չեն, ապա նույնը չի կարելի ասել նրանց «հրամանատարի»՝ Նաիրի Հունանյանի մասին: Այլ հարց է, որ նրանից այսօր բոլորը խորշում են, ինչպես բորոտից: Մեկը մեկից անհեթեթ հրապարակումներ են արվում՝ Նաիրի Հունանյանին մի կապել լրագրության հետ, ազգային գրադարանը մի նշել իբրեւ հոր աշխատավայր, ԼՂՀ վարչապետը նրան չի հիշում եւ այլն: Մի բան սակայն մոռացվում է, որ նրանք բոլորն էլ այս հասարակության մի մասնիկն են, մեր կողքին են ապրել, մեզ հետ են շփվել: Հրաժարվելով ի՞նչ ենք ուզում ասել:

Տես էջ 2

ՀՀՇ-ն՝ լռակյաց դիտորդի կարգավիճակով

երեկ ՀՀՇ-ն, թերեւս անցանկալի ու անպատեհ հարցուփորձերից խուսափելու նպատակով անջատել էր իր հեռախոսները. ՀՀՇ վարչության կամ պարզապես իրազեկ անդամներից որեւէ մեկի հետ հեռախոսազրույց անցկացնելու ջանքերն ապարդյուն էին: Խնդիրն այն էր, որ ՀՀՇ-ն, ի տարբերություն այլ կազմակերպությունների, առայժմ հանդես չի եկել ողբերգական իրադարձությունների գնահատականով (կամ էլ այդ գնահատականն **«Ազգի»** համար չի նախատեսել): Բնականաբար, հետաքրքիր էին վարչության պատասխանները: Թեպետ լրատվամիջոցներում տեղեկություն էր շրջում, թե Վանո Սիրադեղյանը, ինչպես նաեւ ՀՀՇ-ին հարող մի քանի անհատներ այս կամ այն կերպ մասնակցություն են ունեցել ողբերգությանը հաջորդած քաղաքական զարգացումներին (հիշյալ անձինք իրենք էլ չեն ժխտել, որ համակիրն ու աջակիցն են պատասխանության նախարարության վերջնագրի), սակայն պատասխանական դիրքորոշումն արտահայտող հայտարարության հրապարակումն անհասկանալի պատճառով ձգձգվում է: Թե ինչի պատճառով է լռում ՀՀՇ-ն, հուսանք, շուտով հայտնի կդառնա: Իսկ առայժմ կուսակցությունը գերադասում է «այլի ընկնել» ետնաբեմային խաղերում՝ իրադարձությունների բեմում մնալով լռակյաց դիտորդ:

Ա. Բ.

Կարեն Հունանյանին «մատով չեն դիպել»

Հայտնում է նրա դատապաշտպանը

ԵՐԵՎԱՆ, 2 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Հոկտեմբերի 27-ի Ազգային ժողովում տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ քրեական գործով նախաքննությունն ընթանում է Քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան: Հայտնելով այս մասին «Նոյյան տապանի» թղթակցին, մեղադրյալ Կարեն Հունանյանի պաշտպան Կիմա Մելքոնյանն ընդգծեց, որ իր պաշտպանյալին «մատով չեն դիպել»:

Պաշտպանից մեզ հայտնի դարձան որոշ կենսագրական տվյալներ. սբ. դեկտեմբերին կլրանա Կարեն Հունանյանի 25 տարին, միջնակարգ կրթություն ստանալուց հետո նա ընդունվել է «Դավիթ Անհաղթ» հումանիտար համալսարան, սակայն, երկրորդ կուրսի կեսերից ուսումն անավարտ թողնելով, մեկնել է Եվրոպա:

Հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովի նիստերի դահլիճը գրոհած ահաբեկչական խմբի մեկ այլ անդամ՝ Դերենիկ Բեջանյանը մասնակցել է արցախյան ազատամարտին «Զորավար Անդրանիկ» ջոկատի կազմում, եւ, տարբեր վկայությունների համաձայն, հիշյալ ջոկատի լավագույն հրաձիգներից մեկն էր: Այս մասին «Նոյյան տապանի» թղթակցին հայտնեցին «Երկրապահ» կամավորականների միության Շենգավիթի կազմակերպության գրասենյակից: Նույն աղբյուրից հայտնի դարձավ, որ Բեջանյանը ԵԿՄ Շենգավիթի կազմակերպության անդամ է:

Դերենիկ Բեջանյանը փախստական է. Հայաստան է տեղափոխվել Գանձակ (Կիրովաբադ) քաղաքից: Վերջին տարիներին բնակվում է Երեւանում՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարարությանը պատկանող հանրակացարանում, որը գտնվում է Չարբախում:

Իգոր Իվանովը «սառը ջունչ» է զգում

ՕՍԼՈ, 2 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Չեչնիայի առնչությամբ Ռուսաստանի նկատմամբ ճնշման հետ կապված կարելի է խոսել «սառը պատերազմի կրկնության մասին»,- Օսլո ժամանելով հայտարարել է ՌԴ արտաքին գործերի նախարար Իգոր Իվանովը: Ռուս լրագրողների հարցազրույցի ժամանակ նա ընդգծել է, որ Ռուսաստանի նկատմամբ նման ճնշումը եղել է եւ նախկինում, բայց եւ այն ժամանակ եւ հիմա այն հաջողություն չի ունենա:

Երեքշաբթի առավոտյան Օսլոյում կայացած ԱՄՆ պետքարտուղար Մադլեն Օլբրայթի հետ Ի. Իվանովի հանդիպման ընթացքում քննարկվել են, մասնավորապես, եվրոպական անվտանգության խարհիայի ստորագրման նախապատրաստությանն առնչվող հարցեր: Ինչպես զրույցի ավարտից հետո հայտնել է նախարարը, փաստաթղթի առնչությամբ դեռեւս մնում են մի շարք չհամաձայնեցված ձեւակերպումներ, սակայն «քաղաքական կամքի առկայության դեպքում» մոտ օրերս կարելի է այդ հարցում համաձայնության գալ:

ՊԵՏԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«Նկարահանված են նաեւ բացառիկ դաժան կադրեր»

Հավաստիացնում է պետհեռուստատեսության տնօրեն Տիգրան Նաղդալյանը

– Միջադեպի սկզբից հետո ինչքա՞ն ժամանակ են շարունակվել նկարահանումները եւ ի՞նչ կադրեր կան ձեր ձեռքի տակ, որ խոստացել եք հրապարակել, բայց արդեն 5-6 օր է անցել ու չեն հրապարակվում:

- Տեղության ու մանրամասների մասին այսօր ես երեւի թե չխոսեմ: Նկարահանումը ԱԺ-ում իհարկե շարունակվել է որոշակի ժամանակ, բայց քանի որ նախաքննության շահերից ելնելով այդ տեսանյութերը պատկան մարմինների մոտ են, եւ նրանք միայն կորոշեն այն պահը, թե ե՞րբ պետք է ցուցադրել կամ պետք չէ: Կարող եմ միայն ասել, որ նկարահանվածը միայն այն չէ, ինչ ցուցադրվել է արդեն: Կան այլ կադրեր, որոնք այդ պահին չցուցադրելը մի պատճառ ուներ միայն.

դրանք կարող էին ուղղակի աննկարագրելի լարվածություն եւ կրքերի ուղղակի անկանխատեսելի բորբոքում առաջացնել առաջին այդ պահերին, երբ բոլորս պարզապես շոկի մեջ էինք: Մենք բնականաբար այդ բոլորը տեսել ենք, սակայն գտանք, որ հանրային ցուցադրման ներկայացնելը կարող է կրքերի մի աննախադեպ բորբոքում առաջացնել, որովհետեւ, այո՛, այդտեղ կան ուղղակի բացառիկ դաժան կադրեր, որոնք այդ պահին ցուցադրելը սխալ կլինի թեկուզ հենց երկրի կայունության պահպանման իմաստով: Շարունակեմ: Երկրորդ շարժական կայանը մենք գործադրեցինք Գիտությունների ակադեմիայի շենքի դիմաց, եթեր մտանք, եւ, մի խոսքով, փաստեցինք մեր պատասխանատվությունը օպերատիվորեն լուսաբանումը շարունակել: Սակայն, երբ պարզվեց, որ ահաբեկիչները մեծ թվով պատանդ են պահում դահլիճում, սկսվեցին բանակցությունները նրանց ազատելու համար, այդ պահից արդեն մեր բոլոր գործողությունների հիմքում ընկած էր բանակցային գործընթացին չվնասելը:

(Պրն Տ. Նաղդալյանի հետ մեր թղթակցի ընդարձակ հարցազրույցը կարդացեք մեր վաղվա համարում):

digitised by A.R.A.R.@

ՊՄԲԱԳԻԿ

ԱՀԱԲԵԿՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

«Միասնությունը» վերախմբավորվում է

Սկիզբը էջ 1

Քաղաքական որոշում՝ առանց ավելորդ խոսումների

ԱԺ ամենաաջից պատգամավոր Պերճ Բոնապարտյանին վիճակվեց երկրորդ անգամ վարել նիստը եւ ԱԺ վնասված նավը վերստին դուրս բերել փոթորկահույզ նավարկության: «Միասնություն» խմբակցության նախագահ Անդրանիկ Մարգարյանը շնորհակալություն հայտնեց ԱԺ բոլոր քաղաքական ուժերին, որ ճիշտ գնահատեցին ստեղծված իրավիճակը եւ թույլ չտվեցին կատարված ոճրագործության արդյունքում քաղաքական ուժերի վերաբախում կատարել. «Կայունության երաշխիքը Ազգային ժողովն է: Հետագա կյանքը ցույց կտա, որ ԱԺ շարունակելու է «Միասնություն» դաշինքի քաղաքականությունը», նշեց Անդրանիկ Մարգարյանը, որը հավատեց նաեւ «Միասնության» ներսում ստատուս-քվոյի պահպանումը: Նա հրապարակեց խոսնակի եւ փոխխոսնակների թեկնածուների անունները՝ Արմեն Խաչատրյան, Տիգրան Թորոսյան, Գագիկ Ասլանյան: Արմեն Խաչատրյանի խոսքը միանշանակ էր՝ Հայաստանի Հանրապետությունը երկրորդ հազարամյակ պետք է մուտք գործի՝ աղահովելով պետության ազգային անվտանգությունը, յուրաքանչյուր քաղաքացու անվտանգությունը, սերը եւ բարեկեցությունը պետք է բացեն իրենց դռները հայ մարդու առաջ: Նա հատուկ շնորհակալություն հայտնեց Անդրանիկ Մարգարյանին, որը նույնպես առաջադրված էր եւ լիիրավ կարող էր կանգնել իր կողքին, բայց հաղթական կամք դրսեւորելով՝ պատրաստեց իր թեկնածությունը. «Մենք կիրականացնենք այն ծրագիրը, ինչ իրագործելու էին մեր սուրբ նահատակները»: Տիգրան Թորոսյանն արդար էր իր հակիրճ ուղերձում. «Շարժե՛ք խոսքեր տալ, գործով արդարացնենք այն մեծ պատասխանատվությունը, որ մեզ է տրվել»: Նորակազմ հաշվիչ հանձնաժողովը՝ Գալուստ Սահակյանի գլխավորությամբ եւ Արմեն Ռուստամյանի քարտուղարությամբ 17:45-18:30-ը իրականացրեցիկ գաղտնի քվեարկություն: Արմեն Խաչատրյանը 103 կողմ, 10 դեմ ձայներով ընտրվեց ԱԺ խոսնակ, Տիգրան Թորոսյանը 98 կողմ, 14 դեմ ձայներով՝ փոխխոսնակ, իսկ Գագիկ Ասլանյանը 103 կողմ, 11 դեմ քվեներով գրաղեցրեց փոխխոսնակի մյուս պաշտոնը: Դեմ քվեարկող պատգամավորները, վերլուծաբանների կարծիքով, «Իրավունք եւ միաբանության», ինչպես նաեւ ՀՅԴ որոշ պատգամավորներն էին: «Վստահությունը խաբկանք չդառնա», շեշտեց նորընտիր խոսնակ Արմեն Խաչատրյանը՝ ձայն տալով հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանին, որը մասնակցում էր ԱԺ արտահերթ նիստին:

Մենք ի վիճակի ենք հաղթահարել ճգնաժամը սահմանադրական ուղիով

Ռոբերտ Քոչարյանը լավատես էր. «Մեր պետության համակարգը կայուն է, մեր պետական կառույցներն ի վիճակի են հաղթահարելու ճգնաժամը սահմանադրական ճանապարհով, ինչը նշանակում է, որ ժողովրդավարությունը մեր երկրում ամրակայվում է», ԱԺ-ում տիրողմիաբանության մթնոլորտից գոհունակ նախագահը հայտնեց, որմի քանի օրից հայտնի կդառնա վարչապետի թեկնածությունը, որը կհամաձայնեցվի ԱԺ նոր ղեկավարության հետ. նախագահը փորձում էր նաեւ իրատես լինել. «Այս ճգնաժամը երկար ժամանակ իր ազդեցությունը կպահպանի մեր հանրապետության գրեթե բոլորընագավառներում»:

Վերջում Արմեն Խաչատրյանը հրապարակեց ԱԺ հայտարարությունը, ուր հոկտեմբերի 27-ի ոճրագործությունը գնահատվում էր իբրեւ քաղաքական նոցատակներ հետապնդող գործողություն, եւ ԱԺ վերահաստատում էր իր վճռականությունը նախագահի հետ կարգուկանոն հաստատելու, պետության մեջժողովրդավարական արժեքները վերագտնելու: Հայտարարությունը սթափեցնող էր՝ ժողովրդավարությունը մեր երկրում դեռ չի ամրակայվում, այն պետք է վերագտնել:

Հրաժարի՞մք վարչապետությունից

Ալբերտ Բազեյանը, որը հանրապետության նախագահի համար փոխզիջումային նախընտրելի թեկնածու էր եւ կարող էր կամրջել զինված ուժերին, բանակին ու նախագահին, իր թեկնածությունը բացառեց անմիջապես. «Ուղղակի առաջարկ չի եղել, բայց խոսակցություններ եղել են, ես ի սկզբանե մերժել եմ դա եւ միանշանակ բացառել այդ տարբերակը, որովհետեւ, իմ կարծիքով, ճիշտ եմ գնահատում ներկա իրավիճակը, իմ կարողությունները եւս ռեալ եմ գնահատում: Թեկնածուն պետք է կառավարությունում աշխատանքի փորձ ունենա: Դրսի մարդը մինչեւ հասգնի ծանոթանա, որոշ կարողացին, տիրապետել բյուջեին, չափազանց երկար ժամանակ կպահանջվի. իսկ այդ ժամանակը Հայաստանը չունի: Պետք է լինի կառավարության մասնակից վարչապետի թեկնածու, ով աշխատել է կառավարությունում, մասնակցել բյուջեի քննարկումներին, կարող է բյուջեն ներկայացնել: Ես մասնակցել եմ քննարկումներին այնքանով, որքանով բյուջեն վերաբերել է քաղաքապետարանին: Այսօր, իմ կարծիքով, առաջին հերթին տնտեսական գիտելիքներ ունեցող, տնտեսությանը տիրապետող մարդ է պետք, որ կարողանա միջ թե շատ աշխատել: Ոչ ոք չի կարող համեմատվել նախորդ վարչապետի՝ Վազգեն Սարգսյանի հետ, ոչ ոք, բայց եղածների մեջ նաեւ Սմբատ Այվազանին կարելի է համարել միջ թե շատ տնտեսական իրավիճակին ծանոթ գործիչ: Գուցե Վահան Շիրխանյանի թեկնածությունն էլ առաջարկեն, եւս մեկ տարբերակ է: Բայց ցանկացած վարչապետի համար լինելու է շատ դժվար: Այս դեպքերից հետո եւ արտաքին գործոններն են ազդելու Հայաստանի վրա, եւ ներդրումների զգալի նվազում ու կապիտալի արտահոսք կարող է լինել», ի մի բերեց Ալբերտ Բազեյանը, վերջում հատուկ շեշտադրելով. «Վարչապետը եւ կառավարության կազմը պետք է լինեն ԱԺ մեծամասնության համար ընդունելի: Չի կարող վարչապետը լինել քաղաքական որեւէ այլ ուժի ներկայացուցիչ, որովհետեւ եթե նա ձեւավորի կառավարությունը եւ ծրագիր բերի, մեծամասնությունը կարող է չընդունել»:

Վարչապետը նաեւ քաղաքական գործիչ է

«Չեմ ուզում որեւէ կարծիք հայտնել, նախագահի խնդիրն է: Վազգեն Սարգսյանին փոխարինող վարչապետ Հայաստանում չկա», **«Ազգին»** հավաստիացրեց արտադրական ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար Վահան Շիրխանյանը, երբ մենք հետաքրքրվեցինք, թե գերիշխո՞ղ է արդյոք իշխանության շրջանակում Ռոբերտ Քոչարյանի այն դիրքորոշումը, ըստ որի նոր վարչապետը պետք է հիմնականում տնտեսական ուղղվածության գործիչ լինի. Վահան Շիրխանյանը իրավացիորեն արձանագրեց. «Ես չեմ լսել նման տեսակետ, բայց վարչապետը նաեւ քաղաքական գործիչ է, ոչ միայն տնտեսական, չնայած տնտեսականը շատ կարեւոր է»:

Սմբատ Այվազյանը պետական եկամուտների նախարարը, որը Ալբերտ Բազեյանից հետո նախագահի համար հարմար վարչապետության թեկնածու է, առայժմ հերքեց իր պատասխանատվությունը գրաղեցնելու նման պատասխանատու պաշտոն, վկայակոչելով ստեղծված իրավիճակին քաջածանոթ լինելու նույն հանգամանքը, ինչ Երեւանի քաղաքապետ Ալբերտ Բազեյանը: Շրջան այսպիսով փակվում է, եւ փոխբացառման սկզբունքը դադարում է գործել:

Այս համապատկերում ուշագրավ է մի շարք աղբյուրներից հաստատված «Ազգի» տեղեկությունը, որ բացատրում է հոկտեմբերի 27-28-ի լույս գիշերը նախագահ Ռոբերտ Քոչարյանին ԱԺ-ում տրված չորս անձերի ցուցակի առեղծվածը: Այս ցուցակում նշված են եղել զինված ուժերի համար ընդունելի եւ նրանց կողմից պաշտպանվող չորս վճռական պաշտոնների թեկնածուներ ազգային անվտանգություն, ներքին գործեր, հանրապետության դատախազ եւ, իհարկե, վարչապետ: Վարչապետի թեկնածուի անվան դիմաց գրված է եղել Վահան Շիրխանյան: Մեր աղբյուրները պարզաբանեցին, որ այս ցուցակի շնորհիվ հնարավոր է եղել կասեցնել բանակի անկանխատեսելի քայլերը եւ խուլ ընդդիմությունից ակնհայտ առճակատման անցնելու վտանգը: Իրենց սպարապետին կորցրած հրամանատարները պատրաստ էին դուրս գալ կառավարելի ընդդիմությունից: Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանին Վահան Շիրխանյանի կողմից գրեթե անմիջապես առաջարկվել է նախագահ Ռոբերտ Քոչարյանին հայտնել, որ այդ ցուցակը պետք չէ լուրջ ընդունել, այն իրավիճակի լիզաթափման հնարավոր ելքերից էր:

Հայաստանում ամեն ինչ հանդարտ չէ, եւ հաստատված հաշտությունն էլ շատ փուխր է մինչեւ վարչապետի անվան հրապարակումը, քանզի զինված ուժերը եւ բանակային շրջանակները դեռեւս չեն ստացել իրենց հարցերի պատասխանը: ՆԳ նախարար Սուրեն Աբրահամյանը եւ ԱԱ նախարար Սերժ Սարգսյանը գրել են իրենց հրաժարականները, բայց դրանք նախագահի կողմից ստորագրված չեն, եւ ամենակարեւորը դեռ պարզ չէ նոր կառավարության կազմը: **«Ազգին»** հայտնեցին նաեւ, որ նախագահ Քոչարյանի կողմից պաշտպանվող վարչապետության երրորդ թեկնածուն Վազգեն Սարգսյանի եղբայր Արամ Սարգսյանը, հրաժարվել է պարտավորեցնող առաջարկից:

ՆԱՐԻՆԵ ԳԻԼԲԱՐՅԱՆ

Վարչապետի փնտրտուքը

Հայաստանում Վազգեն Սարգսյանին փոխարինող վարչապետ չկա

ԱԺ-ն երեկ վերագտավ իր ղեկավարներին. «Միասնություն» խմբակցությունը առաջադրեց եւ ԱԺ-ն ընտրեց հոկտեմբերի 27-ի ահաբեկչությանը զոհ դարձած Կարեն Դեմիրճյանի, Յուրի Բախչյանի, Ռուբեն Միրոյանի իրավաժառանգորդներին. Ստատուս-քվոն պահպանված է: ԱԺ խոսնակ դարձավ ՀԺԿ անդամ Արմեն Խաչատրյանը, փոխխոսնակներից մեկը դարձյալ ՀԺԿ-ից է՝ Գագիկ Ասլանյանը եւ «Հանրապետական» կուսակցությունից՝ Տիգրան Թորոսյանը. Հանրապետության նախագահն ԱԺ նիստում խոսացավ մի քանի օրվա ընթացքում առաջարկել վարչապետի իր թեկնածուին, որը պետք է համաձայնեցվի ԱԺ նորընտիր ղեկավարության հետ. սակայն վարչապետության խաչը ծանր է: Հանրապետությունում շրջանառող թեկնածուները, իսկ նրանք պետք է լինեն խորհրդարանական մեծամասնության «Միասնության» ներկայացուցիչներ, հակառակ դեպքում խորհրդարանը չի հաստատի ընդդիմադիր վարչապետի ծրագիրը. երեկ ԱԺ-ում ի պատասխան «Ազգի» հարցի, գրեթե միակամ հրաժարվեցին այդ պաշտոնը ստանձնելու գաղափարից

ԱԺ փոխխոսնակներ Գագիկ Ասլանյան եւ Տիգրան Թորոսյան

Կասկածների ու ենթադրությունների առիթ չտանք

Սկիզբը էջ 1

Համոզված եմ, որ նույն այդ հրաժարվողները սույն անձի վերաբերյալ իրենց իմացածն ու ունեցածն ի մի բերելով մի ամբողջական արխիվ կարող են ծեւավորել, որը եթե չօգնի հնությանը, չի էլ խոչընդոտի: Չենք կասկածում նաեւ, որ մյուս ահաբեկիչների կյանքին ու գործունեությանը քաջածանոթներ էլ կգտնվեն, ուրեմն ի՞նչը կամ ո՞վ է խանգարում, որ նրանք ներկայացվեն հանրությանը: Գուցե ճանաչողներն իրենց տեղեկություններով ավելի օգտակար կգտնվեն նախաքննության համար, քան այդ օրը դահիճում գտնվող լրագրողները, որոնք իրենց տեսածն ու լսածը մանրամասնորեն շարադրել են իրենց հաղորդագրություններում, սակայն, շարունակում են հարցաքննվել:

Հոկտեմբերի 27-ի դեպքին հետեւողական է հանրապետության ողջ բնակչությունը եւ ամեն ժամ տեղեկատվության է սպասում: Տեղեկատվություն փոխանցողը մենք ենք՝ լրագրողներս, որ այս օրերին ավելի իրազեկ աղբյուր չունենք, քան դատախազությունը: Սակայն, վերջինս մեզ ընդամենը տեղեկացնում է, որ ահաբեկիչներին մեղադրանք է առաջադրվել ու փորձաքննություններ են նշանակվել (տարօրինակ կլիներ, եթե չնշանակվեին), որը հնության տեխնիկական կողմն է եւ հանրությանը ոչինչ չի ասում: Մինչդեռ, երկու օր է մեզ չի հաջողվում պաշտոնական պատասխան ստանալ նոր ծերբակալություններ եղե՞լ են, թե՞ ոչ: Վերջապես ո՞ւմն է ահաբեկիչներին ծառայած «դեղին ռաֆը»:

Այդ իսկ պատճառով մամուլն անցել է ենթադրությունների ու բամբասանքների ավելի շիկացնելով առանց այդ էլ լարված մթնոլորտը, քաղաքացիներին հանգստացնելով ինչպիսի գիտելիքներ ներիշխանական ու ներկուսակցական շրջանակներում: Հնչեղություն ստացած դատավարությունների փորձից գիտենք, որ լրացուցիչ գաղտնիությունը խոչընդոտ ճանապարհների ընտրություն է ենթադրում: Այս հանրապետությունն այնքան փոքր է, որ յուրաքանչյուր քայլ անելիս ծանոթ-բարեկամի ես հանդիպում: Չէինք ցանկանա այս դեպքի համար էլ ենթադրություններ անել՝ յուրայիննե՞ր են գտնվել ահաբեկիչների մեջ, խոչընդոտ ճանապարհների որոնումների մե՞ջ են... Ենթադրությունները կարող են շարունակել, բայց հազիվ թե դա հանգեցնի հետաքրքրասեր հասարակության լրատվության ծարավը: Եկեք գոնե այս մի դեպքում կասկածների ու ենթադրությունների տեղ չթողնենք:

Հայ ավետարանչական ընկերակցության ուղերձը Ռոբերտ Քոչարյանին

Հոկտեմբերի 27-ին ԱԺ-ում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների կապակցությամբ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին իր ցավակցական ուղերձն է հղել Հայ ավետարանչական ընկերակցությունը: Ուղերձում խոր վշտակցություն է հայտնված զոհվածների ընտանիքներին, ինչպես նաեւ բարձր գնահատանքի խոսք նախագահ Ռ. Քոչարյանին՝ ողբերգության բուն ընթացքում եւ հաջորդող օրերին ցուցաբերած զուսպ ու իմաստուն քաղաքական դիրքորոշման համար: Մասնավորապես նշված է, որ հատկապես նախագահի ճիշտ եւ վճռական գործողությունների շնորհիվ հնարավոր դարձավ չավելացնել կորուստները եւ վնասազերծել ահաբեկիչներին: Հանգամանքների բերումով չկարողանալով անմիջականորեն ներկա գտնվել զոհվածների հուղարկավորության արարողությանը՝ Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանում ներկայացուցիչ վերապատվելի Որնե Լեւոնյանն իր ջերմ աջակցությունն է հայտնել նախագահին եւ խստորեն դատապարտել ահաբեկչության «հեղինակներին»:

Ա. Ռ.

Հեռաձգվեց գործարար համաժողովը

Հայաստան-Արցախ գործարար համաժողովը, որ նախատեսված էր անցկացնել նոյեմբերի 5-7-ը Ստեփանակերտում, հետաձգվել է մեկ շաբաթով: Այս մասին հայտնեցին ՀԱԳՄ մամլո կենտրոնից: Նշենք, որ համաժողովը նախաձեռնել էին Հայաստանի եւ Արցախի կառավարությունները:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ը տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագիր
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 529353, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՀՐԱՅՐ ՁՕՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայութիւն / 562941
Apple Macintosh
համակարգային շարուածք «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Ահաբեկչություն

Սերգեյ Բիչախչյան, պրոֆեսոր.– Հոկտեմբերի 27-ին ԱԺ շենքում կատարվածը խոշոր ողբերգություն է եւ միաժամանակ խայտառակ փաստ: Ինչ թշնամուն չհաջողվեց այդ հանցագործներն արեցին: Մյուս կողմից, խորհրդարանն իրավունք չուներ այն աստիճան անպաշտպան լինելու, որ ցանկացած ավազակ կամ ավազակախումբ կարողանար մտնել այնտեղ եւ ահավոր սպանդ սարքել: Խորհրդարանը կարող է նույնիսկ բաց լինել քաղաքացիների մուտքի ու ներկայության համար (ինչպես, օրինակ, Ֆինլանդիայում), բայց խիստ պաշտպանված: Այլապես ի՞նչ պաշտպանվածն, եթե ինքն իրեն չի կարող պաշտպանել:

Տեղի ունեցածը հետք է թողնելու քաղաքական հետագա զարգացումների վրա: Կա վակուումի, անորոշության, անկայունության վտանգ: Այս վիճակից ըստ հնարավորին շուտ դուրս գալու հաջողությունը կախված է նախագահից. նրա եւ նոր առաջ բացվելիք մյուս ղեկավարների շուրջը ժողովրդի ու քաղաքական ուժերի համախմբվածությունից: Իսկ դուրս գալն այնքան էլ հեշտ խնդիր չէ: Կարեն Դեմիրճյանն ու Վազգեն Սարգսյանը քաղաքական ուժերի լիդերներ էին, եւ որպես այդպիսին հանդես էին եկել ամբողջ նախընթաց քաղաքական զարգացումների արդյունքում: Շատ մտահոգումներ, ծրագրեր կապվում էին այդ մարդկանց գործունեության հետ, եւ հիմա մինչեւ ամեն ինչ կանոնակարգվի շատ ժամանակ կանցնի:

Որեւէ երկրի ներքին կայուն իրավիճակը միջազգային հանրության կողմից նրա ընդունելի լինելու կարեւոր պայմանն է: Մենք աշխարհին այս կերպ ներկայանալու իրավունք չունենինք: Ուստի երկիրը պետք է ունենա անվտանգ կենսագործունեության ավանդույթ: Դա բնավ չի խանգարի եւ չի հակասի ժողովրդավարությանը:

Զավեն Կոշոյան, ՀՀ վաստակավոր բանդակագործ.– Այս երկրում մի զարմանալի «ժողովրդագավ» է պատել մեկեն բոլորին: Ով իր համար մի բանի ձգտում է, ով իր խելքին փչած մի քայլն անում է, ասում է ժողովրդի համար է, խոսում է ժողովրդի անունից: Հիմա էլ էդ հանցագործները, իբր ժողովրդի համար արեցին... Ձեզ ո՞վ է իրավունք տվել մտնել պառլամենտ եւ սպանել ժողովրդի ընտրյալներին. լավ թե վատ ժողովուրդն է նրանց ընտրել: Այս դեպքերը մեր մեջ մի անգամ եւս ջախջախեցին, գլխատեցին այն լույսի շողը, որ սկսել էինք տեսնել: Իհարկե, սա պատ է, եւ մեզ վերջնականապես կոտրել չեն կարող: Ժողովուրդն իր ճամփան կգտնի: Միայն հանգիստ թողեք ժողովրդին: Կուզես ենք կեղծ առաքյալներից, կեղծ փրկիչներից, որոնցից զգուշացնում է Քրիստոսը ասելով, թե «Դեռ իմ անունով շատերը կգան...»:

Սերգեյ Նազարեթյան, ՍՊԱԾ հյուսիսային բաժանմունքի տնօրեն, ակադեմիկոս.– Իսկապես ողբերգություն է ամենաընդգրկուն իմաստով: Նախ, որ զոհվեցին երկրի առաջատար կանխորոշող եւ կերտող պետական-քաղաքական այրեր: Վերջապես ստեղծվել էր մի հզոր դաշինք իր թերություններով հանդերձ, որը սկսել էր միավորել հանրապետությունում եղած քաղաքական մտավոր պոտենցիալը երկրի վիճակը բարելավելու հեռանկարով: Ուստի մենք զրկվեցինք հզոր ուժից: Երկրորդ. խոր ցավ է, որ զոհվեցին պետությանն ու ժողովրդին իսկապես մեծ ծառայություն մատուցած անհատներ: բոլոր 8-ն առանց բացառության: Երրորդ. վերջապես բոլորն էլ հիմնականում երիտասարդ, ընտանիքի տեր, ինչպես ասում են աստվածահաճո մարդիկ էին, որոնց կորուստը ցավ է ցանկացած, մեկի համար: Չորրորդ. խիստ տուժեց հայոց պետականությունը, ողջ հայ ժողովուրդը: Բոլորս լուրջ հույսեր էինք կապում ԱԺ-ի, կառավարության հետ: Ընդգծվում էին որոշակի ուղիներ տնտեսության վերականգնման, Ղարաբաղի խնդրի լուծման, անկախ պետականության կայացման: Հիմա լավագույն դեպքում, եթե նույն գիծը շարունակվի, մեկ կամ մի քանի տարով ետ ընկնենք այդ գործընթացից: Եվ վերջինը միջազգային աստիճանում Հայաստանը հեղինակազրկվեց:

Այժմ կարեւոր պաշտոնների ընտրվողներն ու նշանակվողներն ամեն ինչից բացի պետք է ունենան նաեւ, եթե կուզեք, դիկտատորի գծեր: Կարծում եմ այս փուլում ուժեղ ձեռքի գաղափարին մեծ տեղ պետք է տրվի: Նաեւ բոլոր քաղաքական ուժերը պիտի միավորվեն հանուն Հայաստանի: Մեզ բզկտողը նեղ կուսակցական ու խմբակային շահերն են եւ ամբիցիաները: Սրան պետք է վերջ տրվի:

Անտոն Փիլոյան, ՀՌԱԿ գործիչ.– Ամսի 27-ի ողբերգական դեպքերի մասին մեր ազգային հեռուստատեսությունն ավելի ուշ հաղորդում տվեց, քան ուրիշ հեռուստաընկերություններ: Ես կարծում եմ դա ճիշտ քայլ էր, որովհետեւ չէր կարելի այդ խիստ պատասխանատու պահին չստուգված տեղեկություն հաղորդել: Ես առաջինը Մոսկվայից լսեցի միջադեպի մասին, եւ ինձ վրա ամենավատ տպավորությունը թողեց Ռուսաստանի հասարակական հեռուստատեսության «Օրնակո» հաղորդաշարի մեկնաբանությունը, որով միջազգային-քաղաքական տգեղ ասպարեզ տրվեց կատարվածին: Նրանք ի՞նչ իրավունք ունեին այդպես վարվելու, միջամտելու մեր երկրի ներքին հարցերին: Մենք եւս չպիտի քաղաքական գնահատական տանք դեպքերին մինչեւ քննության ավարտը:

«Ծանր իրավիճակից ելք կգտնվի, բայց թանկ էր վճարված գինը»

Գյումրին դատապարտում է եւ հուսադրում

Ուղիղ մեկ շաբաթ լրացավ Ազգային ժողովի շենքի արյունոտ միջադեպի օրվանից: Ինչպես ողջ Հայաստանն ու հայ ժողովուրդը, Գյումրին եւս դեռ խորապես ցնցված ու տագնապած է տեղի ունեցած ահավոր ողբերգությունից: Անցած օրերի ընթացքում եւ այսօր էլ շատերն իրենց խոր զայրույթն ու մտահոգությունն են շարունակում արտահայտել կատարվածի եւ հանրապետությունում ստեղծված կացության համար, միաժամանակ հույս հայտնելով, որ մեր ժողովուրդն ուժ կգտնի դուրս գալու այս դաժան փորձությունից եւս: Ստորեւ Գյումրիի մտավորականներից մի քանիսի խոսքը համառոտ: Նրանց հետ զրուցել ենք նախկին ԱԺ երեկ երեկոյան նշանակված արտահերթ նստաշրջանը:

Բայց հրապարակայնություն պիտի լինի: Ժողովրդավարության ուղիով ընթացող երկրում կարեւորվում է տեղի ունեցող ծանր հանցագործությունների բացահայտումը եւ դա հանրությանը ներկայացնելը: Դա նաեւ կարեւոր անձերի նկատմամբ երբեմն առաջացող թյուր կարծիքի փարատման միջոց է:

Ինձ թվում է այս պահին հանրապետությունում հանդարտ քաղաքական իրավիճակ է: Չպետք է կասկածել, որ մասնավորապես մեր ավանդական կուսակցությունները սաստ կկանգնեն հանրապետության նախագահին, երկրի կայունության պահպանմանը: Այդ կապակցությամբ մեր կուսակցության հանրապետական վարչության հայտարարությունը դրական արձագանք է գտել Գյումրիում:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ,

Գեղամ Մանուկյան. «Ռեւանշիստների հիմնական թիրախը ՀՅԴ-ն է»

Հանրապետությունում ստեղծված գերլարված մթնոլորտի լիցքաթափման գործում վճռորոշ դեր է վերապահված երկրի քաղաքական ուժերին, ուստի ՀՅԴ ԳՄ անդամ Գեղամ Մանուկյանին խնդրեցինք գնահատել իրավիճակը եւ հնարավոր զարգացումները:

– Իրավիճակն իսկապես խիստ ցիկլացած է նախ այն պատճառով, որ իշխանության երկու թեւերը գլխատված են, երկրորդ՝ որ մարդկային եւ բարոյական անգնահատելի կորուստ է կրել Հայաստանը եւ հայ ժողովուրդն ընդհանրապես: Այնպես որ, համազգային եւ տնտեսական խնդիրները, որ դրված էին իշխանությունների օրակարգում, այսօր մի պահ կասկածի տակ են դրվում: Սակայն հուսադրողն այն է, որ Հայաստանի բոլոր լուրջ քաղաքական կուսակցությունները միակամ են օրինականության պահպանման, նախագահի հետ միասին ստեղծված իրավիճակից դուրս գալու, Ազգային ժողովում քաղաքական ուժերի հարաբերակցությունը պահպանելու վճռականության մեջ: Սա թույլ է տալիս հուսալ, որ կդիմադրվի այն քաղաքացիական համաձայնության մթնոլորտը, որ ծեւավորվել էր խորհրդարանական ընտրություններից հետո:

– Սակայն անհանգստացնող լուրջ պահեր կան, մասնավորապես պղտոր ջրում ձուկ որսալու միտումները, ռեւանշիստական ուժերի հերյուրանքների միջոցով իշխանության վերադառնալու ձգտումները, որ այսօր ակնառու են: Կարծում ենք, հասարակությունը պետք է ասի իր խոսքը, թույլ չտա, որ հասնեն իրենց նպատակին, որին, ինչպես ցույց է տալիս վերջին օրերի նրանց պահվածքը, հետամուտ են ցանկացած, անգամ հայրենիքը զոհաբերելու գնով:

Հանրապետությունում ստեղծված գերլարված մթնոլորտի լիցքաթափման գործում վճռորոշ դեր է վերապահված երկրի քաղաքական ուժերին: ուստի ՀՅԴ ԳՄ անդամ Գեղամ Մանուկյանին խնդրեցինք գնահատել իրավիճակը եւ հնարավոր զարգացումները:

– Ինչպե՞ս եք գնահատում բանակի միջամտությունը քաղաքական զարգացումներին. այսօր բանակը բավական ուժգին փորձում է իր կադրերը, պայմանները թելադրել նախագահին:

– Բանակի անհանգստությունը կարելի է հասկանալ, սակայն դրա հետ մեկտեղ հստակ պետք է գիտակցել, որ սպառնալիքի, վերջնագրերի ճանապարհով նախագահի հետ խոսելն անթույլատրելի է, որովհետեւ դա վտանգում է երկրում օրինականության պահպանումը: Որպես տեսակետ բանակը կարող էր իր առաջարկները ներկայացնել, բայց դա սպառնալիքի կամ շանտաժի չպետք է վերածվի:

– Մամուլի «հայտնի» միջոցները հոկտեմբերի 27-ի արյունալի իրադարձությունները համառորեն փորձում են կապել Դաշնակցության հետ: Ի՞նչ կասեիք այդ մասին:

– Այսօր որեւէ քաղաքական ուժ չի փորձում մեղադրել այս կամ այն կուսակցությանը եւ դրանից կուսակցության շահերին համապատասխան օգուտներ քաղել: Բացառություն են կազմում միայն այն ռեւանշիստական ուժերը, որոնք իշխանությունից զրկվեցին մեկուկես տարի առաջ: Այսօր նրանք փորձում են սեղ խրել ինչպես նախագահի եւ բանակի, այնպես էլ քաղաքական կուսակցությունների եւ բանակի միջեւ, իրավիճակը հնարավորինս ցիկլացնել՝ «որքան վատ, այնքան լավ» սկզբունքով: Նրանց էլ, ի դեպ, կարելի է հասկանալ. վերջին ամիսներին ընթանում են բարձր հասարակական հնչեղություն ունեցող դատավարություններ, որոնք լուրջ հետեւանքներ են ունենալու նրանց համար, եւ պետք է փորձեն ինչ-որ կերպ կասեցնել այդ ամենը: Նրանք առաջ են քաշում նույն թեզերը, որոնցով 1994 թ.-ին պառակտեցին հասարակությունը՝ իրենց արտավոր ուղղելով հիմնականում Դաշնակցության դեմ:

– Եվ նախագահի:

– Եվ նախագահի, բայց հիմնական թիրախը Դաշնակցությունն է: Սակայն վստահ ենք, որ հասարակությունը, ժողովուրդը հստակ պատկերացնում է, թե ովքեր են նրանք եւ ինչ են ուզում:

– Նույն ուժերը նույն հետեւողականությամբ աշխատում են նախագահի հրաժարականի ուղղությամբ: Դաշնակցությունը պատրաստ է դառնալ նախագահի հենարանը, թե՞ կբավարարվի դիտորդի դերով:

– Մենք վստահ հայտարարել ենք, որ նախագահի հրաժարականը սխալ քայլ կլիներ: Նախագահն ուղղակի իրավունք չունի հրաժարական տալու. երկիրը ճգնաժամի մեջ է, եւ որեւէ մեկն իրավունք չունի հեռանալու պատասխանատվությունից՝ առավել եւս նախագահը:

– Շատ են շահարկվում ահաբեկիչների «առաջնորդի» հեռախոսազրույցները Հրանտ Մարգարյանի հետ: Չե՞ք կարծում, որ դա կարող էր նախապատրաստված սցենարի անհրաժեշտ օղակը լինել՝ ահաբեկչական գործողությունը հաստատես Դաշնակցության հետ կապելու միտումով:

– Մամուլում ակնարկներ եղան, թե երեկ Հրանտ Մարգարյանը կանչվել է հարցաքննության: Այո, կանչվել է՝ ի թիվս տասնյակ այլ անձանց, այդ թվում լրագրողների: Քաղաքական որոշակի հակումներ ունեցող թերթեր եւ լրագրողներ այնքան են փորձում աղավաղել փաստերը, որ գրում են, Հրանտ Մարգարյանի բջջային հեռախոսը «բեսսսելեր» էր, որ, Ն. Հունանյանն անգիր գիտեր: Հրանտ Մարգարյանին զանգել են քաղաքային հեռախոսով, երկրորդ՝ այսօր «Առավոտ» օրաթերթում տպագրվել է Նաիրի Հունանյանի հետ նրա հեռախոսային խոսակցության ձայնագրումը, որից ուղղակիորեն հետեւում է, որ Հունանյանն սպիտված էր Հրանտ Մարգարյանին հիշեցնել իր ով լինելը: Ականատեսները կարող են վկայել, որ հեռախոսահամարը վերցրել էին դաշնակցական պատգամավոր Մարտուն Մաթեւոսյանից. դիմել են Ռուբեն Հակոբյանին, Ռոլանդ Շաուոյանին, չեն իմացել. Մաթեւոսյանն է ասել՝ հեռախոսահամարը:

ԼԵՎՈՆ ՊՈՂՈՍՅԱՆ,

ՄԵՆՔ ԵՎ ՆՐԱՆՔ

Պղտորվելու ժամանակը եւ մաքրվելու ժամանակը

Աղավնիներիս ազնվական-հոյաս երամի մեջ հաճախ հոտած ցին են նետում, որպեսզի մենք ահաբեկվենք, թափահարենք մեր թուլացող թեւերը եւ փախչենք, անջատվենք իրարից: Անում են, որպեսզի հազարամյակներով հաստատված մեր երամը բաժանբաժան լինի, որպեսզի մենք ահով, սարսափով, սովածությամբ, մտագարությամբ բռնված ավերենք մեր տունը: Դարեր շարունակ այս են արել: 1988-ից այս են անում: Սուտ է, աշխարհին պետք չէ մեր հոյաս միասնությունը, մեր խաղաղությունը, մեր բեն-ջրախը: Գիտեն, որ մեր միասնությունը, մեր խաղաղությունը հզոր ուժ է: Ու քանի որ իրենք թույլ են, ու քանի որ իրենք խելքով, շնորհներով, ձիրքերով մեզանից ավելի պակաս են, մեր մեջ որոնում, սովորաբար, աղաչնորհ, սնապարծ մեկին են գտնում, նրան երեսուն արծաթ խոստանում, ձեռքում զենք են դնում եւ հրամայում. «Գնա ու սպանիր հորդ, մորդ, եղբայրներիդ ու քույրերիդ»: Միշտ էլ կգտնվի Հունանյան: Ու երբ ավերումն արված է, երբ կրկին սարսռում է երկիրն ու երկինքը, իրենք հեռու են քաշվում: Մնում ենք մենք՝ սպանված, շփոթահար, ահաբեկված: Մնում են այս անգամ 5 չիրականացված, չկայացած արարածներ, որ պատեպաս են գարկվում, օգնություն սպասում, օգնություն հայցում իրենց ուղարկողներից: Իսկ նրանք չկան, նրանք չեն երեւում, նրանք տեր չեն կանգնում Հուդային: Նրանց անունները չեն ասվում (այս տասը-տասնմեկ տարում այս էլ քանիերորդ անգամ): Ոստիկաններ ու դատավորներ են հայտնվում, մեզ բոլորիս ոստիկան ու դատավոր են դարձնում, եւ մենք (ուշացած), արդեն կատարվածին ականատես, արձանագրում ենք, որ ահա, այսպես, այնպես... Առավել սարսափելին են անում. մեզ բոլորիս դարձնում՝ են դատավոր ու դահիճ...

Ովքե՞ր...

Նորից ասեմ. մեր խաղաղությունն աշխարհի տունն է քանդում, մեր հզորությունը վախեցնում է, մեր իմաստությունն ահաբեկում է: Ու մենք, որ խելամիտ, հանդարտաբարո, իմաստուն ժողովուրդ ենք, դառնում ենք դատավոր ու դահիճ: Խաղալիք ենք դառնում, խամաճիկ: Այս անգամ մեզ սկսում են թելերով ղեկավարել: Գրողն իր թուղթն ու գրիչն է թողնում, հողագործը՝ մաճը, առեւտրականը փակում է իր կրպակը, հավաքվում ենք հրապարակներում՝ ճառեր ենք ասում: Ասված իմ, այս ի՞նչ ճառեր են, այս ի՞նչ խոսքեր են:

Լվացարար կանայք, փեբերը ֆշած, բերաններից կրակներ են բաց թողնում, հազիվ տառաճանաչ տղամարդիկ փորձում են անպայման ճշտել, թե ինչու մի քանիսը հատկապես 17:28 ռոպեն են նշում, երբ պարզ մի ճշմարտություն կա. ժամացույցը նշում է 17:06 ռոպե... Իրենց ծրագիրն իրագործել են. բոլորիս դատավոր են դարձրել, բոլորիս՝ դահիճ:

Ովքե՞ր...

Դժվար չէ պարզել, եթե ուզենան: Թաղային ոստիկանի խելք ունեցող ամեն մի ոստիկան ցանկության դեպքում կարող է պարզել: Պետք է կարողանա: Գիտեմ, որ խելացի, ազնիվ, այս երկիրը սիրող հազարավոր մարդ կա: Ու իրենք էլ կպարզեն:

Ես չեմ ուզում, որ բոլորս դատավոր դառնանք, քանզի ամեն մի դատավոր ի վերջո իր դատավճռոն է կարդում, ինքն իրեն է դատում:

Ուզում եմ, որ այս ահաբեկումն ավարտվի, այս խուճապն ավարտվի: Ուզում եմ իմ ընտրյալ կաթողիկոսի օծումը տեսնել, ուզում եմ իմ ընկերոջ նոր գիրքը կարդալ, ուզում եմ, որ իմ տղան մի սիրուն աղջկա սիրո խոսքեր ասի, ուզում եմ, որ այս աղջիկը սիրո խոսքերից ավելի քաղցրանա, ուզում եմ, որ հայր ու որդի հաշտ ապրեն, ուզում եմ...

Ուզում եմ, որ այս երկիրը երկիր դառնա:

ՄԵՐԳԵՍ ՊԱՊՅԱՆ,

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Քաղաքական նոր իրավիճակ Հայաստանում

Հոկտեմբերի 27-ի «սեւ չորեքաբթին» իսկապես նոր քաղաքական իրավիճակ է ստեղծել Հայաստանում, եւ եթե նույնիսկ մեզ հաջողվի առանց ցնցումների ու հարթ անցկացնել պետության բարձրագույն պաշտոնաստարների ընտրությունները ու նշանակումները, միեւնույն է, նոր քաղաքական ճգնաժամի հավանականությունը չի վերանում: Լկատի ունեմ ԵԱՀԿ Ստամբուլի առաջիկա վեհաժողովը եւ դարաբաղյան հիմնախնդրի հնարավոր ճնշումները այնտեղ: Բանն այն է, որ Հայաստանի խորհրդարանի նոր ղեկավարությունն ու դեռ չնշանակված վարչապետը (ովքեր էլ լինեն), ըստ էության ծանոթ չեն բանակցությունները վերսկսելու նախորդ ողջ քաղաքական գործընթացին, Քոչարյան-Ալիեւ վերջին 4 հանդիպումների ժամանակ ձեռք բերված պայմանավորվածություններին: Մինչեւ վեհաժողովը մնացած չափազանց կարճ շրջանում այդ բացը լրացնելը գործնականում անհնար է: Իսկ եթե այնպես պատահի, որ ելնելով նախորդ, գերգաղտնի պայմանավորվածություններից, Ստամբուլում ընդունվի այնպիսի որոշում, որին Հայաստանի նոր ղեկավարները չհամաձայնե՞ն: Անխուսափելի կդառնա քաղաքական հերթական ճգնաժամը երկրում, եւ այդ դեպքում բանակցային գործընթացը չվերսկսված կձախողվի: Հետեւաբար, ստեղծված իրավիճակում, ըստ իս, միջազգային հանրությունը չպետք է շտապի: Հարկավոր է Հայաստանին հնարավորություն տալ դուրս գալու ցնցակաթվածից, հստակեցնելու իրավիճակը եւ հասնելու լիակատար փոխըմբռնման նախագահ-խորհրդարան-կառավարություն օղակներում, ինչը կար Քոչարյան-Դեմիրճյան-Սարգսյան եռյակի միջեւ եւ ինչը դեռ պիտի ձեռք բերվի վերջին երկու եղերահիշատակ դեմքերին փոխարինելու եկածների պարագայում:

Ընդսմին, չի կարելի միամտաբար ենթադրել, թե պետության կայունության համար չափազանց կարեւոր այդ եռամիասնությունը հետ ձեռքբերովի խնդիր է: Ամենեւին չի ցանկանա կասկածի տակ առնել խորհրդարանի եւ կառավարության նոր ընտրվելիք ու նշանակվելիք դեմքերի արժանավորությունը: Բայց նրանք, ովքեր էլ լինեն, դեռ երկար են զգալու զոհված խարիզմատիկ առաջնորդների «սվերների» ծանրությունը: Կամա-ակամա, նորերին անընդհատ համեմատելու են զոհվածների հետ, եւ մեծ ջանքեր ու ոչ քիչ ժամանակ է պահանջվելու, մինչեւ հասարակական գիտակցության մեջ այդ համեմատությունը դադարի ի վնաս նորերի լինելուց, ավելին փոխվի հօգուտ իրենց: Եվ դեռ հարց է՝ այդպես կլինի՞:

Չմոռանանք, անցած խորհրդարանական ընտրություններում «Միասնություն» դաշինքի համոզիչ հաղթանակը մեծապես պայմանավորված էր Կարեն Դեմիրճյան-Վազգեն Սարգսյան երկյակով: Մարդիկ «Միասնությանը» ձայն տվեցին ոչ նրա համար, որ այդ ցուցակում ընդգրկվածներին համարում էին ամենաարժանավորները, այլ հիմնականում այն պատճառով, որ ցուցակը գլխավորում էին ականավոր անհատներ: Այսօր «Միասնությունն» այդպիսի համարժեք անհատներ, նույնիսկ նրանց հեռավոր նմանակներ չունի: Վաղը, մյուս օրը, տա Աստված՝ ունենա: Բայց այսօր խոսքը, թե «Միասնություն» դաշինքի խորհրդարանական մեծամասնությունն օրինաչափորեն ենթադրում է, թե հասարակության մեջ նույնպես գոյություն ունի համարժեք քաղաքական հենարան՝ առնվազն իրատեսական չէ:

Համաձայն եմ, որ պետության կայունությունն այս պահին փորձության չենթարկելու համար Ռեսպուբլիկայի նոր ղեկավարները պետք է ընտրվեն ու նշանակվեն այդ դաշինքից: Բայց միայն այս պահին: Եթե նոր ղեկավարները չհասկանան, որ իրենք կանգնած են ժողովրդի վստահությունը կրկին վերանվաճելու փորձության առաջ, ապա մենք կվերադառնանք ոչ վաղուցվա անցյալին, երբ ժողովրդի մեջ կատարելապես վարկաբեկված ՀՀՇ-ն բացարձակ մեծամասնություն ուներ խորհրդարանում ու կառավարությունում, սակայն լիակատար ձախողում կրեց եւ հեռացավ ասպարեզից: Առավել տագնապալի կդառնա իրավիճակը նաեւ այն դեպքում, եթե նոր ղեկավարությունն ինչ-ինչ հանգամանքներից դրդված, փորձի քաղաքական ռեաբիլիտացիայի ենթարկել հեռացածներին: Որ վերջիններս կձգտեն դրան՝ արդեն իսկ ակնհայտ է. ՀՀՇ-ի երբեմնի «երեւելիները» ամենատագնապալի պահին զուր չէին հայտնվել բանակի ազդեցիկ հրամանատարների շրջապատում եւ ամենեւին չէին թաքցնում նրանց ազդեցությունն իրենց օգտին ծառայեցնելու ձգտումները: Ուստի մեր վաստակաշատ գեներալներին զուցե ավելորդ անգամ խորհուրդ կտայի դրսեւորել սթափություն, հասկանալ, թե իրենց արդար զայրույթից ովքե՞ր են ուզում օգտվել եւ ինչո՞ւ: 1998-ի փետրվարյան իշխանափոխությունից առաջ Վազգեն Սարգսյանն իմաստություն ունեցավ բանակը դուրս չբերել ժողովրդի կամքի դեմ: Հանկարծ այնպես չստացվի, որ նրա մարտական ընկերները, Սպարապետի կորուստից ափոթահար, ակամա իրենց ուսերը պատվանդան դարձնեն քաղաքական ռեւանշի ու հարության ձգտողների համար: Ժողովուրդը դա չի ընդունի, ժողովուրդն արդեն իսկ 1999-ի մայիսի 30-ի ընտրություններում մերժել է մեր ազգային բախտի երեկվա տերերին: Կրկին ասպարեզ վերադառնալու նրանց փորձը, որ մեծապես պայմանավորված է նախ եւ առաջ նախկինում իրենց կատարած չարագործությունների համար պատասխանատվությունից խույս տալու ձգտումով, կհանդիպի ժողովրդական զանգվածների դիմադրությանը, իսկ եթե բանակը ներքաշվի այդ խաղի մեջ, կառաջանա բանակ-ժողովուրդ հակամարտության սպառնալիք:

Ահա թե ինչու է վիճակը չափազանց լուրջ: Պահանջվում է զսպվածություն, սթափ դատողություն թե՛ նախագահից, թե՛ նոր ղեկավարներից, թե՛ բանակից: Պետք է գտնել խելացի փոխզիջում: Նոր կարերը նշանակելիս: Բանը հավակնությունները չեն, ոչ էլ պատասխանների բաշխումը: Շատ ավելի կարեւոր է երկրի հստակ կառավարելիության ապահովումը, հասարակական անդորրի վերականգնումը, ժողովրդավարության նվաճումներին տեր կանգնելու վճռականությունը: Ուժով ոչ ոք ոչ մեկի ոչինչ չպետք է պարտադրի՝ քաղաքական հեռանկար է պետք ու երաշխիք: Հեռանկարը մշակելը երկրի քաղաքական ղեկավարության խնդիրն է, պատասխանելը բանակի: Խաղաթղթի վրա պետության ու ժողովրդի ճակատագիրն է, իսկ դա չափազանց թանկ արժեք է, որպեսզի զոհաբերվի այս կամ այն անձի մեծամոլական հավակնություններին կամ ռեաբիլիտացման ձգտումներին:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Քաղաքական կապիտալ. ունե՞նք, թե՞ ոչ

Այսօր, եթե ունենայինք էլ բիսմարկյան տիպի քաղաքական հսկաներ, գործնականում ի՞նչ կկարողանային անել նրանք հանդիպելով բազասական առումով իրենց համարժեք մի ուժի, ինչպիսին իշխանության բազմաշերտ եւ կարծր դասն է, էլ ուր մնաց հաջողության հասնեն քաղաքական այս պատարով:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, երբ մենք ազատության հետ գիրկընդխառը հայտնվեցինք մի նոր համակարգում, առաջացավ քաղաքական բաց դաշտ, ուր հայտնվեց մեկ օրում վերապրոֆիլավորված, համապատասխան գիտելիքներ եւ փորձ չունեցող մարդկանց մի սպար խումբ: Նրանցից մի քանիսը հետագայում աճեցին, դարձան հայտնի քաղաքական գործիչներ, մնացածները ոչ մի կերպ չդառնալով այդպիսիք, համառորեն դիրքավորվեցին այդ ոլորտում վարկաբեկելով թե՛ իրենց, թե՛ քաղաքականություն կոչվածն ընդհանրապես: Տարիների ընթացքում, նվազելու փոխարեն, նրանց շարքերը համալրեցին կոչումով եւ գիտելիքների իմացությամբ չպատշաճող եւս շատ ուրիշներ:

Հայաստանում այսօր բացառվում է ժողովրդավարության վերելքը ոչ միայն նրա համար, որ դրա ցանկությունը չկա, այլեւ քանզի փակ է վերջինիս մուտքը եւ քանզի միայն նրա աղավաղված ուրվագծերն են մեզ ցուցադրվել, ինչը պետք է հիասթափություն ծներ: Կա հիվանդության մի տեսակ, որի բուժումն անհրաժեշտ է սկսել նախ օրգանիզմը թունազրկելով: Կոմունիստական «չեռնոբիլը» թունավորել է բոլորիս անխիր: Սա է, որ համառորեն չենք հասկանում: Ինչո՞ւ մերձբալթյան երկրներում նոր համակարգն արագ եւ բնականոն իր հունը գտավ, դարձավ կենսակերպ, ինչո՞ւ Լեհաստանում, Չեխիայում անցումը եղավ սահուն: Շատ պարզ, սրանք անմասն էին սովետական վարակի մահացու դոզայից, վիրուսը նրանց չէր հասցրել քայքայել, եւ հետո նրանք դեռ երեկ էին դարձել պետականազուրկ, որի վերականգնումը շատ էլ չուշացավ:

Կուսակցությունները: Անկախությունը տվեց բազմակուսակցական համակարգի հնարավորություն, բայց այդպես էլ չծնեց լուրջ իմաստով կուսակցություններ: Որոշակի էլեկտորատ եւ համակիրներ չունեցող կուսակցությունը դադարում է այդպիսին համարվելուց: Անկախության այս վերջին շրջանում աղավաղվեցին անգամ այն գաղափարները, որոնք համարվում էին սակրամենտալ (սրբազան) եւ որոնց շուրջ պետք է համախմբվեին մարդիկ: Այսօր Հայաստանում փաստորեն չկա մի կուսակցություն, որը կարող է իր հետեւից ժողովուրդ տանել: Կոմկուսը եւ ՀՅԴ-ն ճգնում են ընդունել դասական կուսակցությունների կեցվածք, ինչը հաճախ վերածվում է դիլետանտիզմի: Առաջինն ինտեգրացիայի ուժով դեռ քարշ է տալիս երեկվա կյանքը երազողների մի որոշակի զանգվածի, երկրորդը գոյատեւում է դարձյալ անցյալի անթեղված կրակի բորբոքմամբ: Պնդել, թե այստեղ գաղափարների նվիրվածության խնդիրն է առաջնային, ճիշտ չէր լինի: Այս երկուսի առանձնացման հնարավորությունը պայմանավորված է նաեւ մյուսների անդեմությամբ: Գալով ՀԺԿ-ին իբրեւ հաղթող կուսակցության, որը թխվեց երկրապահ գումարած հարաբերականներ արդյունքում, բոլորն էլ հասկանում են, որ դա դաշինք էր պատգամավորական աթոռների վերաբաշխման առումով: Դա իշխանության ձգտումն էր՝ ապահովելու Ազգային ժողովում մեկ մարդու պես կոնակասեղմության գործընթացը: Ավելորդ է խոսել ԱԻՄ-ի, անգամ ԱԺՄ-ի եւ նման կուսակցությունների մասին, որոնք երբեմն իրավիճակային բերումներով կարճ ժամանակահատվածում արհեստական վերելք են ունեցել եւ դարձյալ հայտնվել իրենց համարժեք վարկանիշային սանդղակներին: Պոդիումի վրա փորձեցին բարձրանալ «Օրինաց ...»-ը, «Արժանապատիվ ...»-ը եւ էլի շատերը, որոնք մեկ անգամ ցուցադրվելուց հետո մերժվեցին հասարակության կողմից՝ ի պահ տալով մինչեւ հաջորդ ընտրությունների նախաշեմին նորից վերակենդանանալու ակնկալությամբ: Այլ խոսքով, վերջին տասնամյակում ականատես եղանք «одноразовых» օգտագործման շատ կուսակցությունների:

Ժողովուրդը: Վերջինս մերթ հարցական հայացքը դարձնում է դեպի իշխանությունը, մերթ խորհրդարանական ընդդիմությունը. երկու դեպքում էլ մնում է անպատասխան, երկուսից էլ ձեռ է քաշել, հասկացել է, որ ինքը մենակ է ու խաբված: Մարդիկ այլեւս չունեն հավատ, չունեն հենարան, առաջնորդ, հիասթափված են կուսակցություններից, իշխանություններից, ընդդիմությունից, քաղաքականությունը համարում են անձնական հարցերի լուծման միջոց: Նրանց մի մասը հետդարձի ջատագով է, մի մասն էլ իրավացիորեն ակնկալում է քաղաքական նոր ուժի ծնունդ:

Իշխանությունը: Մշտապես ձգտում է երկարաձգել իր գոյությունը: Ինքնահատման խնդիր չունի, քանզի վարկաբեկված է թույլատրելի սահմաններից ավելի: Միակ մտահոգիչը նվազագույն բյուջեի ապահովման խնդիրն է, առանց որի երկիրը պարզապես կդադարի: Քաղաքական առումով ձգտում է ունենալ տպավորություն, չի սիրում խելացիներին, հանդուգն մարդկանց, ափսոսում է ջլատել կուսակցություններին, սրանց ժողովրդի աչքում ներկայացնել վատահամբավ:

Գործող վարչակարգը ոչ մի կերպ չի կարողանում ազատվել օգտապաշտության մոլուցքից, առանձին դեպքերում մաս է կազմում կլանային օլիգարխիայի: Բացակայում է իշխանության թեւերի տարանջատումը, երկիրը «ղեկավարվում» է գործադիր մարմնի կողմից, օրենսդիրը հոպատակ է:

Ընդդիմությունը: Վերջինիս, այսպես կոչված, իշխանամետ թեւը սկեպտիկ է, տառապում է դուալիզմով մի կողմից ժողովրդի հետ է, մյուս կողմից կոմպրոմիսային հարաբերություններ է ստեղծում իշխանության հետ, բացակայում է արմատականությունը: Սպասողական կեցվածքը բնորոշ է մի շարք թվացյալ ընդդիմադիր կուսակցություններին եւ առանձին քաղաքական գործիչներին, որոնք ակնկալում են դառնալ իշխանության հավելվածը: Առանձին անհատներ ձգտում են դուր գալ ժողովրդին, չունեն պետության կառուցման լուրջ կոնցեպցիա, գործում են պոպուլիստական տրամադրությամբ եւ նպատակն այդ դաշտում առաջնության դափնուն տիրանալն է ընդամենը: Ներկայումս սկսվում է առողջ ընդդիմադիր ուժերի համախմբման գործընթաց, որն ամենայն հավանականությամբ քարշ հոսանք կառաջացնի քաղաքական դաշտում: Վերջինս չունի այլընտրանք պետականաշատ եւ ուժեղ լինելուց բացի:

Մամուլը: Լրագրողական արդի միտքը (բացառությամբ մեկ-երկու թերթերի) քաղաքական դաշտի արտացոլման առումով համարժեք է առկա քաղաքական ընդհանուր մակարդակին: Երկուսն էլ այս առումով ցածր են եւ իրար արժանի: Նկատելի է, որ այսօր չունենք ներքաղաքական իրավիճակը լրջորեն վերլուծող տեսաբաններ. շատերը պարզապես զբաղված են ընդամենը քաղաքական գործիչների հետ միապաղաղ հարցազրույցներով, որոնց արդյունքում չեն ծնվում քարշ մտքեր, նոր խոսք, եզրահանգումներ:

Համակարգը: Պատկերացրեք մեկին, որին ըստ ուզածի կամ ըստ պահանջվող դերի «տաղանդավոր» կինոռեժիսորն այլանդակել է այրվածքներ, խեղումներ, գրիմ, էլի ինչ ասես: Ահա այս վիճակում է համակարգը ներկայացվել ժողովրդին: Պարզ չէ՞, որ նման դեպքում ժողովուրդը պիտի հակակրանք դրսեւորեր մատուցվածի հանդեպ: Սեղավորն այլանդակողն է եւ ոչ ժողովուրդը, որը երես թեքեց համակարգից այնպես, ինչպես երես կթեքեր պոռնիկի պիտակ ստացած անմեղից:

Երկու կարեւոր գործոններ խոչընդոտում են երկրի առաջընթացը. մեկն օբյեկտիվ, մյուսը՝ սուբյեկտիվ.

1. Նախկին համակարգի ներքին եւ ժառանգված հոգեբանությունը.

ա) պետության դերի երեկվա ընկալման շարունակականությունը.

բ) ընտրությունների դերի ու նշանակության նախկին պատկերացումը.

գ) կադրային նոմենկլատուրան եւ այլն...

2. Գործող իշխանությունների ստեղծած արհեստական խոչընդոտները.

ա) ընտրությունների խեղաթյուրումը.

բ) նոր օրենքների հարմարեցումն իրենց շահերին,

գ) սեփականաշնորհման այլասերումը.

դ) դասահիրավական համակարգի, մամուլի ոչ անկախ լինելու հանգամանքը եւ այլն...

Ահա քաղաքական այս կապիտալով ենք այսօր հայտնվել գործող համակարգում: Ստեղծված տրագիկոմեդիան արդյունք է նրա, որ այս համակարգի էությունն անգամ որոշ կուսակցություններ, առանձին քաղաքական գործիչներ, նաեւ ժողովրդի մի մասը չեն էլ հասկացել: Նոր համակարգը շատերի կողմից ընկալվեց իբրեւ նախկին համակարգի արտաքին երեւույթներից ծերբազատվելու միջոց՝ առանց ըմբռնելու, որ վերջինս էլ իր հերթին կարող է պարտադրել արտաքին նոր երեւույթներ, եթե չես պահպանում այդ նոր համակարգի խաղի կանոնները:

Եվ որքան խորանում է ճգնաժամը, այնքան մեծանում է քաղաքական նոր ուժի անհրաժեշտությունը, քանզի եղածներն իրենց սպառել են, լճացել, ինքնավերընծյուղման կամ ինքնապատվաստման անհաջող փորձերն էլ արդյունք չեն տալիս: Հասարակությունը պահանջում է քաղաքական մի ուժ, որը կտարբերվի նախորդներից նաեւ նրանով, որ կասի այն, ինչ մտածում է այսօր շատերն ասում են մի բան, անում հակառակը: Քաղաքական նոր ուժն այլեւս չի կարող գործել ժողովրդի կամքին հակառակ, չի կարող աչքաթող անել քաղաքացիական հասարակարգի արմատավորման կոնցեպցիան: Դա են հստակորեն ծեւավորվող այս ուժերի ներկա դրսեւորումները: Հանդգնված եմ՝ քաղաքական կապիտալը Հայաստանում նոր է ստեղծվում եւ կգա արժեւորելու նախկինում եղածը՝ դրա մի մասը համարելով արժեք, մի մասն էլ իբրեւ քաղաքական դուրս նետելով անկախության ծեռքբերումների ոսկե ֆոնդից, այս դեպքում միայն երկիրը կմտնի բնականոն հունի մեջ:

ՏԻԳՐԱՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

(Հոդվածը գրված է վերջին ողբերգական դեպքերից առաջ)

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

«Պետք չէ մեծ բան ակնկալել ԵԱՀԿ Ստամբուլի գագաթաժողովից»

Ասել է Վ. Օսկանյանը «Թյուրքիե» թերթի թղթակցին

«Թյուրքիե» թերթի թղթակից Սերդար Ույանը Երեւանում հանդիպել է Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանի հետ: Իր հաղորդագրության մեջ թղթակիցը նշում է, որ այժմ Հայաստանում անորակելի խառնաշփոթ է տիրում: Ճգնաժամի մեջ է նաեւ տնտեսական կյանքը: Հայերը տպասում են, որ բացվի Թուրքիայի հետ սահմանագիծը: Այդ եւ այլ հրատապ խնդիրների է նվիրված Սերդար Ույանի ստորեւ բերված հարցազրույցը, որ ներկայացնում ենք որոշակի վերապահությամբ:

- Ռոչարյանն ի՞նչ ազդեցություն կունենա Ալիեւի վրա ԵԱՀԿ գագաթաժողովին ծրագրված տեսակցության ժամանակ:

- Մենք արդեն վեց-յոթ ամիս է, ինչ պարբերաբար տեսակցում ենք Ալիեւի հետ Ղարաբաղյան հիմնահարցի շուրջ: Յոթ ամսվա ընթացքում վեց հանդիպում է տեղի ունեցել, որոնց ընթացքում պարբերական եւ կարեւոր առաջադիմություններ են արձանագրվել, թեեւ տակավին հստակ արդյունք չի ստացված: Այդ իսկ պատճառով էլ Ստամբուլի գագաթաժողովը շատ կարեւոր է: Խորհրդարանի վրա կատարված հարձակումը անշնչաց չափով կարող է ազդել հաշտության գործընթացի վրա, նախագահ Քոչարյանն այս օրերին ստիպված է ավելի շատ ներքին հարցերով զբաղվել, քան ժամանակ հատկացել հաշտության գործընթացին: Այս պատճառով պետք չէ մեծ բան սպասել ԵԱՀԿ Ստամբուլում կայանալիք գագաթաժողովից: Երկու նախագահների հանդիպումները ցույց են տալիս, որ երկու կողմերն էլ հաստատակամություն ունեն: Երկուսն էլ գիտեն, որ որոշակի զիջողությունների գնալով պետք է դյուրացնեն հաշտությունը: Միջազգային ասպարեզում էլ բոլորը համակարծիք են, որ Ղարաբաղյան հակամարտությունը պետք է լուծվի միայն խաղաղ ճանապարհով: Սակայն Ադրբեջանն է, որ փոխեց իր դիրքորոշումը: Մենք միշտ ջանացել ենք հարմարվել եւ հավատարիմ մնալ մեր խոստումներին: Ադրբեջանն էր, որ բանակցությունների առաջին իսկ օրվանից համառորեն կառչած էր մնում իր տեսակետներից: Վերջին դեպքերը կարող են փոքր-ինչ ուշացնել, սակայն միեւնույն է, ուշ թե շուտ արդյունքի հասնելու ենք: Անշուշտ բոլոր կողմերն էլ նույն բարյացակամությունը պետք է ցույց տան:

- Նախագահ Դեմիրելը հայտարարել է, որ եթե աղահովվի հայ-ադրբեջանական հաշտությունը, Թուրքիան պատրաստ է ամեն կերպ օժանդակել Հայաստանին: Դուք հավատո՞ւմ եք այդ խոստումներին:

- Օժանդակություն բառն ինձ անհանգստացնում է: Սահմանագիծն այստեղ կամ այնտեղ անցայման պիտի բացվի: Թուրքիան է, որ պիտի անի այդ բանը: Մեր սահմանն արդեն բաց է: Մենք կարծում ենք, որ Թուրքիան այս տարածաշրջանում կառուցողական դեր է կատարում եւ Կովկասում էլ հաշտության կողմնակից է: Միայն թե դժբախտաբար Թուրքիան առաջնահերթություն տալով իր ներքին առավելությանը, անտեսել է աշխարհաքաղաքական իր դիրքը: Հուսով ենք, որ Թուրքիան այս մերձեցման մեջ ավելի անկողմնակալ ու դրական դիրք կգրավի: Դա օգտակար կլինի ոչ միայն Հայաստանի, այլեւ Ադրբեջանի եւ ողջ տարածաշրջանի համար: Թուրքիայի կողմից տարվող շրջափակման ու արտախման քաղաքականությունը ոչ միայն հայերի, այլեւ մյուս ազգերի վրա էլ ժխտական ազդեցություն գործեց: Կարծում եմ, որ եթե Թուրքիան ավելի հավասարակշռված ու անկողմնակալ վարվի, մենք կարող ենք մեր հարաբերությունները բնականոն դարձնել: Հուսով եմ նաեւ, որ Թուրքիան Ղարաբաղյան հարցը չի խառնի այս գործին: Եթե մոռանանք Ղարաբաղի հարցը, Թուրքիայի եւ մեր միջեւ որեւէ հարց չկա: Ուրեմն թույլ չտանք, որ այս հարցը ավելի երկար խանգարի մեր հարաբերություններին: Մենք վստահում ենք Դեմիրելի խոսքերին, եւ հավատում ենք, որ եթե Ղարաբաղյան հարցը հաղթահարվի, շրջափակումը կվերանա, երկու երկրների միջեւ դիվանագիտական եւ տնտեսական հարաբերություններ կհաստատվեն, եւ մեր միջեւ ոչ մի խնդիր չի մնա:

- Ո՞րն է ձեր ակնկալիքը Թուրքիա-Հայաստան սահմանաղոտան բացման առնչությամբ:

- Մենք արդեն հինգ տարի սպասում ենք դրան: Արդեն պատրաստ էինք տնտեսական ու դիվանագիտական հարաբերություններ հաստատելուն, այսօր էլ պատրաստ ենք, եւ միշտ էլ պատրաստ ենք լինելու: Որեւէ նախապայման չունենք: Թուրքիան է, որ դժկամում է ու անընդհատ մերժում: Թուրքիան համառորեն իրար է կապում Ղարաբաղյան հարցն ու հայ-թուրքական հարաբերությունները: Մինչդեռ Թուրքիան պետք է տարածաշրջանի շահերը ավելի բարձր գնահատի իր ներքին զգացմունքներից:

- Խորհրդարանում տեղի ունեցած դեպքերի ժամանակ դուք այնտե՞ղ էիք:

- Ոչ, այդ պահին բացակայում էի ամերիկյան պատվիրակության հետ: Հանդիպումից հետո վարչապետը խորհրդարան գնաց, իսկ ես ուղեւորվեցի օդակայան ճանապարհելու Թալբոթին: Հենց այդ միջոցին էլ տեղի է ունեցել հարձակումը: Ցավում եմ, որ հարձակման պահին այնտեղ չէի:

- Դուք նավթամուղի ո՞ր տարբերակին եք զորավիգ: Ո՞րն է ձեր դիրքորոշումը Բաքու-Ջեյհան նավթամուղի առնչությամբ:

- Նավթամուղի ուղեգծի հարցում Հայաստանը բնավ միջամուխ չի եղել: Մաղթում ենք, որ մրցակցությունն այդ հարցում բացասական ազդեցություն չունենա տարածաշրջանի հավասարակշռության վրա: Մենք պարզապես կցանկանայինք, որ ուղեգծից օգտվեին տարածաշրջանի բոլոր պետությունները, այլ ոչ թե միայն մեկը: Մենք ցանկանում ենք, որ նավթամուղը ժամ առաջ իրականություն դառնա եւ անցնի ամենաահեկան տարածով: Նավթամուղը չպետք է ազդեցություն ունենա երկրների քաղաքական առաջի վրա:

Պատրաստեց
ԱՐԱՄ ՄԿՐՏՉՅԱՆԸ

«ՔՐԻՍՏՆ ՍԱՅՆՍ ՄՈՆԻՏՈՐ»

Հիմարություն կլիներ անտեսել, թե ինչ էին ակնարկում ծայրահեղականները

Անդրադառնալով հոկտեմբերի 27-ի ահավոր իրադարձություններին, ամերիկյան «Քրիստն Սայնս մոնիտոր» թերթի լրագրող Ֆրեդ Ուիրը գրում է, որ հետխորհրդային շրջանի Կովկասը անցած տասնամյակի տարիներին բռնություններով բռնկված է եղել, բայց եթե չլինեին Կասպից ծովի նավթային պաշարները, հարցը երեւի թե միջազգային հանրության ուշադրությանը չարժանանար: Նրա կարծիքով, այդ հանգամանքը կարող է կապ ունենալ ութ հոգու կյանք խլած ահաբեկչական արարքի հետ:

Հարձակումը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ Հայաստանը պատրաստվում էր լուծել իր դառը բնաբնական խնդիրները հարեւան Ադրբեջանի հետ: Որեւէ փոխզիջումային քայլ այդ առնչությամբ հայ ազգայնականների կողմից դիտվում է որպես դավաճանություն, նշում է նա, ավելացնելով, որ այդ նույն օրը ԱՄՆ-ի փոխքտարտուղար Սթրոբ Թալբոթը հանդիպել էր ինչպես նախագահ Քոչարյանի, այնպես էլ վաղամեռիկ վարչապետ Սարգսյանի հետ: Առաջարկած ծրագրում Ղարաբաղը մնում էր Ադրբեջանում «ինքնավար հանրապետություն»՝ իր ուրույն բանակով եւ դրամանիշով:

«Ամեն անգամ, որ փորձ է արվում լուծել Ղարաբաղի խնդիրը բանակցությունների միջոցով, ինչ որ բան կատարվում է», մեջբերում է հոդվածագիրը Մոսկվայում Կառնեգի էնդոումենտ հիմնարկության Կովկասի հարցերով մասնագետ Ալեքսեյ Մալաշենկոյի խոսքերը:

Որոշ մեկնաբաններ, այնուհետեւ գրում է հոդվածագիրը, դեպքերը կապում են նավթի գործոնի հետ: Ցարդ հայտնաբերված պաշարները, ինչպես նաեւ էներգետիկական հակամարտությունները տարածաշրջանում, այնուամենայնիվ, ետ են կանգնեցրել շատ ներդրողների, սակայն եղածին տիրանալու եւ բաշխելու պայքարը շարունակվում է: Ֆրեդ Ուիրը նշում է նավթը տեղափոխելու 3 հիմնական ուղիները:

«Ղարաբաղի հարցի լուծումն գտնելը կարեւոր գործոն է Արեւմուտքի համար: Դրանով կարելի կլինի լուծել հսկայական քաղաքական մի խնդիր, որը սերտորեն կապված է Կասպից ծովից նավթի անվտանգ արտահանման եւ տեղափոխման խնդիրներին», ասել է Մոսկվայի Արեւելյան ուսումնասիրությունների ինստիտուտի աշխատակիցներից Վիտալի Նաումկինը: «Հայաստանը դեպի Արեւմուտք արմատական թեքում կատարելու եզրին է գտնվում: Կասկած չկա, որ Թալբոթը ուժեղ դրդապատճառներ պարունակող մի փաթեթ է առաջարկել Հայաստանին՝ համաձայնություն կնքելու Ադրբեջանի հետ: Դրանում հավանաբար տեղ են գտել զարգացման նպատակներին հասկացված վարկեր եւ այլ օժանդակություններ, սակայն դրանցից հիմնականը, հավանաբար, նավթախողովակները Հայաստանով անցնելու հեռանկարն է, որը մեծ եկամուտներ կարող է բերել երկրին», նշել է նա:

Սա էլ, հոդվածագրի կարծիքով, կարող է զայրացնել ազգայնականներին, որոնք որեւէ նման քայլ համարում են դավաճանություն: Մոսկվայի ազգագրության ինստիտուտի կովկասյան բաժանմունքի վարիչ Սերգեյ Հարությունյանի խոսքերով էլ ավարտվում է հոդվածը: Վերջինս նշում է, որ «սպանությունները հստակ ուղղված նախազգուշացում էին նախագահ Քոչարյանին, որպեսզի ավելի զգույշ լինի Ղարաբաղի հարցում: Գործողությունը կատարողները կարող էին խենթ ծայրահեղականներ լինել, բայց ցանկացած մարդ կարող է հասկանալ, թե ինչ էին նրանք ակնարկում, եւ հիմարություն կլիներ անտեսել այդ»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ահաբեկչություն Հայաստանում. Հարցերը պատասխաններից շատ են

Երեւանում կատարված դաժան ահաբեկչական գործողությունը բազմաթիվ հարցերի տեղիք տվեց: Ընդ որում, առաջին րոպեներից իմանալով ահաբեկիչների անունները, էլեն էին հավատում, թե Ղրիմից Երեւան տեղափոխված լրագրող Նաիրի Հունանյանը եւ «ընտանիքը» միայնակ են գործել՝ առանց որեւէ մեկի օգնության: Խիստ պարզունակ կլինի այդ գործողությունները ներկայացնել որպես «ժողովրդի իրավունքների համար պայքարի մարտիկների» խելագար գործողություններ: Պատմությանը շատ դեպքեր են հայտնի, երբ մոլագարները «հնչեղ» մահափորձերի հեղինակներ են եղել, սակայն այնուհետեւ պարզվել է, որ նրանց թիկունքում հստակ ուժեր են կանգնած եղել:

Տարբերակները բազմաթիվ են. երկուշաբթի Ինտերֆաքսին տված իր հարցազրույցում սենսացիոն տարբերակ առաջարկեց ՌԴ Պետդումայի խոսնակ Գենադի Սելեզնյովը: Նա չի բացառում, որ սպանության դրդապատճառ կարող է լինել Ռուսաստան-Բելառուս միությանը Հայաստանի միավորման ծրագրերը, որը պատրաստվում էին նախաձեռնել հայ խորհրդարանականները: Սելեզնյովի խոսքերով, այդ մասին իրեն հաղորդել է ահաբեկչության զոհ դարձած Հայաստանի խորհրդարանի խոսնակ Կարեն Դեմիրճյանը: Ռուսաստանին եւ Բելառուսին ավելի սերտ ինտեգրացման գաղափարի կողմնակից էր նաեւ վարչապետ Վազգեն Սարգսյանը, ասել է Սելեզնյովը:

Անդրկովկասի երկրներում միշտ էլ թեժ վեճերի, նաեւ պետական հեղաշրջումների վերածած քաղաքական խաղերի առարկա է եղել Ռուսաստանի կամ ԱՄՆ-ի հետ մերձեցման հարցը: Եթե Վրաստանում եւ Ադրբեջանում «ում հետ բարեկամանալու» հարցը մի քանի անգամ երկրների ղեկավարների դեմ մահափորձերի եւ հեղաշրջումների պատճառ է եղել, ապա հարեւան Հայաստանին մինչեւ վերջերս հաջողվել էր զերծ մնալ արյունահեղությունից: Գաղտնիք չէ, որ անցած չորեքշաբթի Երեւանում զոհվածներից շատերը եւ ամենից առաջ վարչապետ Վազգեն Սարգսյանը քաղաքական Օլիմպոս բարձրացան դարաբաղյան շարժման ալիքի վրա: Ժամանակին հենց այդ ալիքն էլ անկախ Հայաստանի առաջին Նախագահի աթոռին էր բարձրացրել Լեւոն Տեր-Պետրոսյանին, ապա՝ պատճառ դարձել նրա հեռացման: Քաղաքական քաստերքեմից Լեւոն Տեր-Պետրոսյանի հեռացման նախաձեռնողների մեջ առաջին ջութակներ էին այդ ժամանակ վարչապետ Ռոբերտ Քոչարյանը եւ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը: Շատ հնարավոր է, որ հենց այդ նույն դարաբաղյան հիմնախնդիրը, որի պրիզմայով էլ շատերը դիտում են Ռուսաստանին Հայաստանի մերձեցման գաղափարը, պատճառ դարձավ խորհրդարանում տեղի ունեցած ողբերգության: Երեւանում բազմաթիվ վերլուծություններ այն կարծիքին են, որ ահաբեկչությունն առնչվում է ԱՄՆ-ի պետքարտուղարի առաջին տեղակալ Սթրոբ Թալբոթի Անդրկովկաս, Թուրքիա եւ Մոսկվա կատարած այցի հետ: Ճիշտ է, եւ բարձրաստիճան ամերիկացի դիվանագետը, եւ ՀՀ նախագահի պատասխանատու ներկայացուցիչը կտրականապես հերքել են ահաբեկչության եւ Երեւանի ու Լեռնային Ղարաբաղի շուրջ բանակցությունների ցանկացած ընդհանրություն: Իհարկե, առանց կոնկրետ տվյալների առայժմ հնարավոր չէ պնդել, որ դարաբաղյան հարցի կարգավորման խնդրում առաջիկա լուրջ փոփոխությունները բերեցին ականավոր հայ քաղաքական գործիչների մահվան, սակայն փաստը մնում է փաստ, որ խաղից դուրս բերվեցին հայկական քաղաքական թատերաբեմի կարեւորագույն գործող անձինք:

Ինտերֆաքսի աղբյուրների համաձայն, Սթրոբ Թալբոթի վերջին վոյաժի ընթացքում քննարկվել են դարաբաղյան կարգավորման ամերիկյան նոր ծրագրի մանրամասներ: Այդ փոխզիջողական տարբերակը նախատեսում է Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի տարածքային անկախությունը եւ Հայաստանի ճանապարհային հաղորդակցությունների ապաշրջափակումն ու ԼՂՀ հայերի անվտանգության երաշխիքները ՄԱԿ-ի կամ ԵԱՀԿ հովանու ներքո: Ընդ որում, Ռուսաստանին ենթադրվում է կարգավորման գործընթացի հավասար իրավունքներ ունեցող մասնակիցներից մեկի դերը:

Բնականաբար, դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացից Ռուսաստանի՝ որպես գլխավոր միջնորդի, մեկուսացումը բողոքի ալիք կբարձրացներ Հայաստանի եւ ԼՂՀ-ի ռուսամետ ուժերի շրջանակներում: Անխուսափելիորեն լուրջ քաղաքական ճգնաժամ կառաջանար, որի հետեւանքները դժվար կլիներ կանխագուշակել: Կ. Դեմիրճյանի եւ Վ. Սարգսյանի քաղաքական կողմնորոշումները հաշիվ առնելով, կարելի է ասել, որ նրանց ֆիզիկական ոչնչացումն այժմ զգալիորեն ուժեղացրել է Հայաստանի արեւմտամետ կողմնորոշման աջակիցների դիրքերը: Պատահական չէր նաեւ այս կապակցությամբ Երեւանում ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինի հայտարարությունը, ուր նա հաստատել էր Ռոբերտ Քոչարյանին Մոսկվայի աջակցությունը: Մոսկվան հասկացնել տվեց, որ իր հավատարիմ դաշնակցին դժվար րոպեին միայնակ չի թողնի եւ պատրաստ է տարածաշրջանում ամենաակտիվ դեր ունենալ: Սրա վկայությունն է Սոչիում նոյեմբերի 5-ին նշանակված ՌԴ եւ ՀՀ նախագահների հանդիպումը: Գագաթաժողովից եւ Երեւանում կադրային լուծումներից հետո ըստ ամենայնի իրավիճակը մի փոքր կոպարզվի:

Համադրեց
ԱՐՄԵՆ ՄԿՐՏՉՅԱՆԸ

Օտարերկրյա ՁԼՄ-ները մանրամասներ են ներկայացնում

Օտարերկրյա մամուլը եւ գործակալությունները լայնորեն արձագանքում են հայաստանյան տեղի ունեցած իրադարձություններին եւ հետեւում դրանց զարգացումներին: Հայտնի մանրամասները ներկայացնելուց զատ, արտասահմանյան ՁԼՄ-ները նաեւ հավելյալ տեղեկություններ են մատուցում: Մասնավորապես Ռոյթեր գործակալությունը, նկարագրելով Ազգ-ում տեղի ունեցածը, տեղեկացնում է, որ Նպիրի Հունանյանը Վազգեն Սարգսյանի վրա կրակելիս ասել է՝ «Հերիք է խմես մեր՝ արյունը, որին ի պատասխան հնչել են «մորուքավոր պոռնի» վերջին խոսքերը. «Ես ամեն ինչ արել եմ ձեր եւ ձեր երեխաների համար»: Պարզվում է, որ Հունանյանն ամիսներ շարունակ իր ընկերներին եւ ծանոթներին հայտարարել է պետական պաշտոնյաների նկատմամբ հաշվեհարդար տեսնելու իր «երազանքի» մասին: Սակայն ոչ ոք լուրջ չի ընդունել՝ հաշվի առնելով ծայրահեղ արտահայտությունների նկատմամբ նրա հակումը:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մեկնույթ

1907/23/10 թ. Բերլին
Գերադասիւ Սրբազան հայր.
Տ. Վահրամ եպիսկոպոս
Մանկունի.
Նախագահ երաժշտական
Քննիչ մասնաժողովին
ի Կ. Պոլիս

Ձեր սրբազանութեան ղրկած տեսակն ու նամակը ստացայ այստեղ Բերլինում: Առաջադրում եք «Ս. դասարագի երգեցողութիւններէն մի քանի կարեւոր երգեր եռաձայնի վերածուած, ըստ դահանջման երաժշտական-բազմաձայնական արուեստի ուղղել եթէ ուղղութեան կարոտ են, առանց երբէք փոխելոյ միաձայնի հայկական եղանակը»:

Հանգստի ժամանակն էր. տեսակը դացուցանէ:

Եթէ մենք դարձենալիք ունինք մեր եղանակներով, ունինք միայն շարականի հին, դարգ, հասարակ (ոչ տօնական, որ խիստ աղաւաղուած է) երգերով: Սոցա մէջ յստակ, միամիտ, ջերմեռանդ, հաւատացեալ ոգի կայ. ոգի, որի մէջ դայծառ փայլում է մեր նախնեաց անմնան. զգայուն, կենդանի եւ վեհ սիրտը, որ ջինջ է առաւօտեան օդի դէս:

Մեր երաժշտութեան երկրորդ, բայց հիմնական ու մշտաբուխ աղբիւրն է հայ շինականի խորունկ, անդաճոյճ ու կսեմ խնդացող եւ լացող երաժշտութիւնը, որի մէջ դայծառանում է հայ անմեղուկ գեղջուկն իր ամբողջ ներին եւ արտաքին կեանքի բոլոր երեւոյթներով:

Գերադասիւ Սրբազան հայր, դէտք է ցաւօք տեսնեմ, որ այդ եւ առհասարակ Ս. դասարագի եղանակներից եւ ոչ մէկն է հարազատ հայ եկեղեցական:

1. Փառք քեզ- եւրոդականացած (աւելի իտալական ճաշակով) տաճիկ Սեմ-Սերան է:

2. 3. Մարմին Տէրունական-Քրիստոս ի մէջ- զուտ յոյն եկեղեցական եղանակներ են արաբ եւ տաճիկ երաժշտութեան Հիւզզում եղանակի բովիցն անցած:

4. Սուրբ սուրբն սարքով- տաճիկ եկիահի եւ վերջերս, ըստ Ս. Եկմալեանի, եւրոդական Chajenz էջերի վերայ սրբագրած խառնուրդ է եւ

5. Հայր մեր- տաճիկ Սիկիահ եւ Ալլա եղանակների ոգով է կազմուած:

Այս բոլորի մէջ, եթէ կայ հայկական տարրն այնքան չնչին է, որ, առանց ցաւելու, կարելի է մի կողմ դնել եւ դինչ կորցրած չենք լինի:

Թէ ինչդէս տեղի են տուել հայ եղանակները դադաայ երաժշտական ինքնադատական դասդութիւնը կարդի հետ է կարդուած խումբ դատրաստելու, կազմելու եւ վարելու համար:

Քառաձայնը դիւրին է, որովհետեւ աւելի նդատակայարմար է մարդկային արական եւ իգական, համադատասխան բարձր եւ ցած բնական բաժանումներին:

Եռաձայնը դահանջում է. նայելով գրուածքի ոճին, երգի կազմութեան եւ այլն կամ միասեռ, այսինքն զուտ արական կամ զուտ իգական խումբ ունենալ եւ կամ այլասեռ խառն խումբ: ըստ երաժշտական եւ տեղական դայմանների դահանջման: Երկու դէդքումն էլ դժուար է նոյնիսկ փորձառու երաժշտի համար: Եթէ անհրաժեշտ դահանջ է բազմաձայն դատարագի երգեցողութիւնը, նոյնքան անհրաժեշտ է նդատակայարմար ձեւով վարած բազմաձայն երգեցողութիւնը: Ուստի, ես, անձնադէս, կառաջարկէի գործ ածել Մ. Եկմալեանի խառնաձայն դատարագը, առանց որեւէ փոփոխութիւն անելու գրուածքի մէջ, քանի որ, ես, առ այժմ, մեր երաժշտական հրատարակի վերայ, մի ուրիշ, աւելի արժանի գրուածք չեմ ճանաչում: Այս իր բոլոր դակասութիւններով հանդերձ, գոնէ մի որոշ ոճ ունի իր ամբողջութիւն: Իսկ նորա գրուածքները տգիտօրէն սրբագրելը, առնուազն, անհամեստութիւն է: բազմաձայն երաժշտութիւնը ոչ թէ զանազան ձայների է, այլ ստեղծագործութեան եւ այն մտացի նախատրատրաստուած ստեղծագործութեան արդիւնք է միայն:

Այնքան էլ դիւրին չէ մեր եկեղեցական երգեցողութեան բազմաձայնութեան խնդիրը, որդէս կարծում են նորատր տիրացուներն ու դդիրները. որովհետեւ նախ դէտք է ստեղծել բազմաձայնութեան հային յատուկ ոճ ու ոգի, ապա թէ ընդհանրացնելու մասին մտածել: Որովհետեւ երաժշտութիւնն էլ լեզուի դէս ունի իր յատուկ քերականական օրէնքներն ու ոլորմանց տարբեր ոճերը, որոնք միշտ զանազան են զանազան ազգերի համար:

Խնդիրն այնքան խորունկ եւ զգայուն է, որ նամակներով լուծելն անհնար է, լուծումը աղագան կը տայ եւ ժամանակի ընթացքում, կամաց կամաց, իրական ճանաչարհով ու մեծ ջանքերով եւ այն տասնեակ ու հազար դատրաստուած երաժշտագէտների անընդհատ աշխատանքներով:

Յուսամ թէ, գոհ դիտի մնամ այս երկտողովս.

Գերադասիւ Սրբազան հայր.

Քանի օրից կանցնիմ Ս. էջմիածին.

Ձեր Հայրական օրհնութեան կարոտներով

մաչեմ ի համբոյր Սրբազան աջոյ

Ձեր եւ Գերադասութեան

Ամենախոնարհ ծառայ եւ որդի

Կոմիտաս

Փրկված մասունք

Մեր թերթի հոկտեմբերի 21-ի համարում «Դատարագի սրբագրուած երգերը» խորագրի ներքո տպագրել էինք Կոմիտասի նամակներից երկուսը: Այս անգամ ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում Կոմիտասի նամակը Վահրամ եպս. Մանկունուն եւ Կ. Պոլսի երաժշտական մասնաժողովի նախագահին: Կարծում ենք, այն կկարդացվի ուշադրությամբ:

Թերթեցի

Նկատեցի

ա. եղանակները դարգելու մասնաւոր ջանք

բ. ընտրած երգերի եղանակները եւ Տաճկաստանի հայոց եւ Ռուսաստանի հայոց (ըստ Մ. Եկմալեանի) են վերաբերում

գ. երաժշտական հատուածները կամ տաղաչափական ոտները զատուած են կամայական կերդով

դ. եռաձայնի վերածողն առաջը դրած է Մ. Եկմալեանի եռաձայն դատարագը եւ դահած է անփոփոխ որչափ եղանակները նոյն կամ նմանօրինակ են եղած

Քննիչ մասնաժողովի ընտրածների եղանակն էլ (բազմաձայնութեան մասին առանց իսկ ամենափոքր հասկացողութիւն ունենալու) ինը կազմած է կամ յարմարցուցած առաջադրած եղանակին ուշ եւ զարհուրելի սխալներ են առաջ եկած:

Գերադասիւ Սրբազան հայր, դէտք է ցաւօք տեսեմ, որ այդ եւ առհասարակ Ս. դատարագի եղանակներից եւ ոչ մէկն է հարազատ հայ եկեղեցական:

1. Փառք քեզ- եւրոդականացած (աւելի իտալական ճաշակով) տաճիկ Սեմ-Սերան է:

2. 3. Մարմին Տէրունական-Քրիստոս ի մէջ- զուտ յոյն եկեղեցական եղանակներ են արաբ եւ տաճիկ երաժշտութեան Հիւզզում եղանակի բովիցն անցած:

4. Սուրբ սուրբն սարքով- տաճիկ եկիահի եւ վերջերս, ըստ Մ. Եկմալեանի, եւրոդական Chajenz էջերի վերայ սրբագրած խառնուրդ է եւ

5. Հայր մեր- տաճիկ Սիկիահ եւ Ալլա եղանակների ոգով է կազմուած:

Այս բոլորի մէջ, եթէ կայ հայկական տարրն այնքան չնչին է, որ, առանց ցաւելու, կարելի է մի կողմ դնել եւ դինչ կորցրած չենք լինի:

Թէ ինչդէս տեղի են տուել հայ եղանակները դադաայ երաժշտական ինքնադատական դասդութիւնը կա-

Դառնանք տեսակի սրբագրութեան «Միաձայն եղանակը-իսկական եղանակը-անփոփոխ եւ անձեռնմխելի դահել, եւ միայն կանոնաւորել բազմաձայնի վերաբերեալը, ըստ դահանջման արուեստին»:

Ըստ դահանջման արուեստին առաջադրում էք սրբագրել կամ կանոնաւորել: Վերն ասածներից երեւեցաւ, որ այդ եղանակները օտար են. յուրաքանչիւրն ունի իր յատուկ ոճն ու գործը. դաշնակելու եւ բազմաձայնի վերածելու է ուրեմն այդ օտար երաժշտական ոլորունքներին յարմարուելով, այսինքն համադատասխան ոգին դահելով (որդէսզի եղանակի եւ բազմաձայնի մէջ մի միութիւն եւ ամբողջութիւն դրսեւորուի) դէտք է դահանջում են բազմաձայնութեան օրէնքները:

Տեսակի մէջ դարունակուած բոլոր երգերն էլ (մասամբ բացառութիւն է հայր մերը, որ խառն ոճ ունի) դաշնակուած են եւրոդական, մասնաւորադէս, աւելի ռուս ոճով (ըստ Մ. Եկմալեանի):

Ձեր Գերադասութեան հաճութեան համաձայն առանց եղանակին ձեռք տալու, միայն երաժշտական ուղղագրական տարրական սխալները սրբագրեցի նոյնիսկ տեսակի մէջ: Իսկ մնացած երգական, գեղարուեստական եւ ոճի սրբագրութիւնը, որդէս եւ անհարթութիւններն ու անյարիր հնչիւնները թողի անձեռնմխելի, որովհետեւ, եթէ այդ եւս սրբագրելու լինեի, սխիդուած նորը կազմելու էի, որ ամիսների նոյնիսկ տարիների գործ ու աշխատանք է դահանջում: Օտար եղանակների համար չարժէր ոսկի ժամանակ շռայլելը. թող օտարները հոգան իրանց, մենք մեր երաժշտութեան մասին:

Ձեր հաճութիւնն էր «ուղղել, եթէ ուղղութեան կարոտ են» յօժարութեամբ կատարեցի ինչ որ կարելի էր:

Երկու խօսք եւս.

Առաւել դիւրին է քառաձայն դատարագ վարելը, քան եռաձայն:

Վերջինս մի շարք դժուարութիւնների հետ է կապուած: խումբ դատրաստելու, կազմելու եւ վարելու համար:

Քառաձայնը դիւրին է, որովհետեւ աւելի նդատակայարմար է մարդկային արական եւ իգական, համադատասխան բարձր եւ ցած բնական բաժանումներին:

Եռաձայնը դահանջում է. նայելով գրուածքի ոճին, երգի կազմութեան եւ այլն կամ միասեռ, այսինքն զուտ արական կամ զուտ իգական խումբ ունենալ եւ կամ այլասեռ խառն խումբ: ըստ երաժշտական եւ տեղական դայմանների դահանջման: Երկու դէդքումն էլ դժուար է նոյնիսկ փորձառու երաժշտի համար: Եթէ անհրաժեշտ է դահանջ է բազմաձայն դատարագի երգեցողութիւնը, նոյնքան անհրաժեշտ է նդատակայարմար ձեւով վարած բազմաձայն երգեցողութիւնը: Ուստի, ես, անձնադէս, կառաջարկէի գործ ածել Մ. Եկմալեանի խառնաձայն դատարագը, առանց որեւէ փոփոխութիւն անելու գրուածքի մէջ, քանի որ, ես, առ այժմ, մեր երաժշտական հրատարակի վերայ, մի ուրիշ, աւելի արժանի գրուածք չեմ ճանաչում: Այս իր բոլոր դակասութիւններով հանդերձ, գոնէ մի որոշ ոճ ունի իր ամբողջութիւն: Իսկ նորա գրուածքները տգիտօրէն սրբագրելը, առնուազն, անհամեստութիւն է: բազմաձայն երաժշտութիւնը ոչ թէ զանազան ձայների է, այլ ստեղծագործութեան եւ այն մտացի նախատրատրաստուած ստեղծագործութեան արդիւնք է միայն:

Այնքան էլ դիւրին չէ մեր եկեղեցական երգեցողութեան բազմաձայնութեան խնդիրը, որդէս կարծում են նորատր տիրացուներն ու դդիրները. որովհետեւ նախ դէտք է ստեղծել բազմաձայնութեան հային յատուկ ոճ ու ոգի, ապա թէ ընդհանրացնելու մասին մտածել: Որովհետեւ երաժշտութիւնն էլ լեզուի դէս ունի իր յատուկ քերականական օրէնքներն ու ոլորմանց տարբեր ոճերը, որոնք միշտ զանազան են զանազան ազգերի համար:

Խնդիրն այնքան խորունկ եւ զգայուն է, որ նամակներով լուծելն անհնար է, լուծումը աղագան կը տայ եւ ժամանակի ընթացքում, կամաց կամաց, իրական ճանաչարհով ու մեծ ջանքերով եւ այն տասնեակ ու հազար դատրաստուած երաժշտագէտների անընդհատ աշխատանքներով:

Յուսամ թէ, գոհ դիտի մնամ այս երկտողովս.

Գերադասիւ Սրբազան հայր.

Քանի օրից կանցնիմ Ս. էջմիածին.

Ձեր Հայրական օրհնութեան կարոտներով

մաչեմ ի համբոյր Սրբազան աջոյ

Ձեր եւ Գերադասութեան

Ամենախոնարհ ծառայ եւ որդի

Կոմիտաս

Ոգիր եւ պատիժ

Հայաստանի գրողների միությունը «խորհրդաւոր գիտակցելով մեր բարոյական կորստի այն անհեղի չափերը, որ հոկտեմբերի 27-ի սդանդով կրեց Հայաստանի երրորդ հանրապետության ամեն մի քաղաքացի, եւ յուրաքանչյուր հայ մարդ ամբողջ աշխարհում, երկրի ու ժամանակի համադատկերում տեսնելով հանդերձ մեր զոհերի անփոխարինելի մեծությունը եւ մղվելով կորստի ծանրության այդ գիտակցությամբ», երեկ գրողների միության դահլիճում սգո միտինգի էր հրավիրել հայ գրողներին, մտավորականներին: Մեկ րոպե լռությամբ հարգելով հոկտեմբերի 27-ին ահաբեկչությանը զոհ գնացածների հիշատակը, գրողների միության քարտուղար Աբգար Ափինյանը բացեց սգո միտինգը: Գրողների միության նախագահ Հրանտ Մաթեւոսյանը, անդամներ Լեւոն Հախվերդյանը, Հրաչյա Մաթեւոսյանը, Դավիթ Մուրադյանը, Հրաչյա Բեյլերյանը եւ Ալեքսանդր Թոփչյանը հետեւողական ընթացքի դահանջ էին ներկայացնում ՀՀ նախագահին: Մեկիկ-մեկիկ անդրադառնալով անմեղ զոհերի գործունեությանը, ուժային նախարարներին մեղադրում էին մինչեւ այժմ չբացահայտված սդանությունների համար ու հայցում արդար դատաստան: «Հրեշավոր կրիմինալ մեծամեծ ուժեր են կանգնած կատարվածի ետեւում, ասում էր Ալ. Թոփչյանն ու ավելացնում, եթե ոճրագործները չդատժվեն, ապա այս սդանդը դեռ կբարունակվի: Բացահայտել ու դատժել է դետ, որ չդառնա երկաթե դիմակի գաղտնիքը»:

Սգո միտինգն ավարտվեց գրողների միության համատեղ հայտարարության ընդունմամբ՝ ուղղված ՀՀ նախագահին եւ Ազ դատգամավորներին, ուր մասնավորապես ասվում է. «Դուք բոլորդ մեր փորձության այս ծանր ժամին հրադարակ եք իջեցնելու ձեր ամբողջ այն նվիրականը, որ ձեզանից յուրաքանչյուրն անբուրդ ունի եւ առանց որի անհնար է դատկերացնել մարդուն, առավել եւս նախագահին եւ դատգամավորին: Մենք մեզանից փոքր ու բարձր ենք լինելու, մենք եթե ոչ ներող ու սիրող՝ միմյանց գոնե հանդուրժող ենք լինելու, այլապես մեր բոլորիս հայրենիքի օրը դարձնում ենք սդանիչ կասկածների ու սեւ ոխերի գիշեր»:

ՄԱՐԳԱՐԻՏ ՄԱՐԱՐՅԱՆ

ՎԵՐԱԴԱՐՁ

Հայրենիքը կանչում է իր զավակներին

Ուղիղ մեկ տարի առաջ ձեռքս ընկավ Ավետիք Իսահակյանի թոռան՝ Ավիկ Իսահակյանի նամակը, որ գրել էր Մոսկվայից, հիվանդանոցում գտնվելու օրերին: Նամակն ուղղված էր հայտնի ճանապարհաշինարար, բանաստեղծ Ռազմիկ Գարանյանին: եվ, ահա, քանի որ Ավիկը վերադարձել է Մոսկվայից, մեկընդմիշտ եկել է Հայաստան, մտիս ընթացք տալու համար, նոդատակահարմար եմ համարում հասցված մեջբերել հիշածս նամակից. «Միրելի Ռազմիկ, գրում եմ քեզ հիվանդանոցից... Հաշվում եմ օրերը, որդեսզի դուրս գրվեմ ու գամ Հայաստան: Ես շատ ու շատ բաների մասին այստեղ խորհեցի. մարդ դիտի ադրի հայրենիքում: Իմ ամենամեծ սխալը Հայաստանից գնալն էր: Շեմ կարող ինձ ներել, ականջիս մեջ միշտ քո խոսքերն են. «Ինչ գործ ունի Ավետիք Իսահակյանի թոռը Մոսկվայում»: Ես հասկացա, որ սխալ եմ արել: եվ հավատա ինձ, հինգ տարվա մեջ Մոսկվայում ոչ մի երջանիկ օր չեմ ունեցել: Ամեն ինչ օտար է ինձ այստեղ՝ թէ՛ բնությունը, թէ՛ նիստուկացը, թէ՛ մարդկային հոգեբանությունը, թէ՛ օդը, թէ՛ ջուրը: Ինչքան լավ եմ ես հիմա հասկանում իմ դատիկին, ինչքա՞ն է խեղճը տանջվել օտարության մեջ, ինչքա՞ն է կարոտել իր հայրենիքը: եվ վերջադես եկավ: Ճակատագիրը սիդեց ինձ անցնել դատիկիս ճամփով... Ռազմիկ ջան, երբէք այսքան երկար նամակ չէի գրել, էլ ո՞ւմ առաջ բացեի սիրտս, եթե ոչ Վարդեսի հոգեւոր զավակի»:

Ինչո՞ւ այս դահին հիշեցի ու մեջբերում արի նամակից: Բանն այն է, որ Ավիկը վերադարձել է Հայաստան մեկընդմիշտ: Երբ տանս հեռախոսազանգը հնչեց, չէի սդասում նման ուրախ լուր: Փառք Աստծո, ուրախ լուրեր էլ են լինում: Ամեն հայի վերադարձը, կարծում եմ, այսօր ազգային ուրախություն է: եվ այս նամակի մեջ բացվող տրի խոստովանությունն էլ ի լուր հայոց աշխարհի է: Ավիկը այս նամակի մեջ իր իսկ առաջադրած դատգամի կատարմամբ, ինչդէս ասում են, ջուր է խմում բոլոր նրանց տրերից, ովքեր առանց հայրենիքի ադրել չեն կարող:

Ահա այսդէս մտածելով, այս խոհերով հասնում եմ Ավիկ Իսահակյանի տուն: Զրուցում ենք երեքով՝ ես, Ավիկը եւ նրա տիկինը՝ Ուզանը, որ թոռնուհին է Սարտիրոս Սարյանի: Երկու մեծ մարդկանց ժառանգներ են դիմացս, երկուսն էլ իրենց մեծ հայրերի դատգամները կատարողներ:

Կարծես արդարացման տեսք դնելով դատմում է Ավիկը, որ Մոսկվայում, շահած լինելով Ռուսաստանի Հումանիտար գիտական ֆոնդի գրանտը, չորս տարիների ընթացքում գրել է 600 էջից բաղկացած «Ավետիք Իսահակյան. գիտական կենսագրություն» մենագրությունը: Հայտնում է նաեւ, որ 2000 թվականին Յունեսկոյի մակարդակով նշվելու է Իսահակյանի ծննդյան 125-ամյակը: Կարծես երեկ էր, ասում է նա, մենք նշեցինք Վարդեսի ծննդյան 100-ամյակը: Քսանհինգ տարին անցել է խանհինգ վայրկյանի դես, սակայն, վիթխարի կորուստներ եւ վիթխարի նվաճումներ են տեղի ունեցել: Ամեն բանի հետ, այնուհետեւ տեսնում է նա, իսկապես հնարավոր եղավ իրականացնել հայոց վաղեմի երազանքը, հայոց անկախ հանրապետության ստեղծումը: Ավելին, այսօր լիիրավ անկախության է գնում մեր հայրենիքի անբաժան մաս Արցախը: Ասում է մի սերունդ, որ զերծ է կեղծ գաղափարախոսությունից՝ իբր ազգը չի կարող ադրել առանց մեծ եղբոր հովանավորության: Ավիկը հիշատակության է արժանացնում նաեւ փաստը, որ այսօրվա դրությամբ Հայաստանում չկան քաղբանտարկյալներ, լույս են տեսնում բոլոր կուսակցությունների խոսնակ-թերթերը:

Այսքանից հետո ասեմ, որ բարի է մեր եղբոր վերադարձը, բարի եւ օրինակելի: Հայրենիքը կանչում է իր զավակներին:

ՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՆԱՆՅԱՆ

ԱՍՏՂԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

Երբ Գիբսոնը վնասեց մեջքի եւ ուսի մկանները

Հայտնի է, որ Մել Գիբսոնը մարտաֆիլմերում նկարահանվելիս բոլոր դժվար հնարքները անձամբ էր կատարում չադավինելով կասկադյորների օգնությանը: Միշտ ամեն ինչ լավ էր վերջանում՝ առանց վնասվածքների: Սակայն վերջերս «Հայրենասերը» ֆիլմում, բավական հետաքրքրաշարժ, նկարահանվելիս Գիբսոնը դետք է երեխային գրկած խուսափելով բախումներից, անցներ արգելքները: Սկզբում ամեն ինչ հարթ էր ընթանում, բայց հանկարծ դերասանը ցավից կծկվեց եւ փիչ էր մնում գցեր երեխային: Պարզվեց, որ այդ դահին Գիբսոնը վնասել էր իր մեջքի եւ ուսի մկանները, որից հետո բժիշկները մեկընդմիշտ արգելեցին նրան կատարել վտանգավոր հնարքներ: Գիբսոնը չառարկեց եւ այժմ նրա փոխարեն վտանգավոր գործերը կատարում են հմուտ կասկադյորները, որոնց մասին դժվար թէ կոահեն կինոյի երկրպագուները:

Տ. Հ.

digitised by A.R.A.R.@

Մարզական

ՑՐԱՅԱՏԿ

Պետք է դուրս գալ միջազգային ասպարեզ

Հայկական ջրացասկը չափազանց հարուստ ավանդույթներ ունի: Մեր մարզիկները բազմաթիվ հաջողություններ են հասել օլիմպիական խաղերում, աշխարհի, Եվրոպայի, ԽՍՀՄ-ի առաջնություններում: Բոլորին հայտնի են մեր ջրացասկորդներ Սերժ Քոչարյանի, Վասիլի Կուվշինկինի, Վահան Սարիբեկյանի, Դավիթ Համբարձումյանի, Սիրվարդ Էմիրզյանի անունները:

Իսկ ինչպե՞ս է վիճակն այժմ: Այդ հարցին պետք է պատասխաններ երեւանում, Դավիթ Համբարձումյանի անվան ջրային ձեւերի մարզադպրոցում անցկացված հանրապետության պատանեկան առաջնությունը: Սա, փաստորեն, մարզաձեւի կարեւորագույն ստուգատես էր, քանի որ լավագույնս երեւաց, թե ինչպիսին է վիճակը Հայաստանում:

Առաջնությունում հանդես եկան 48 մարզիկ-մարզուհիներ, որոնք մրցեցին երեք տարիքային խմբերում: Մասնակիցները հիմնականում ներկայացնում էին Դ. Համբարձումյանի անվան մարզադպրոցը եւ Երեւանի Արաբկիրի համայնքի ջրային ձեւերի մարզադպրոցը: Առաջնության մասնակիցներն իրենց հարաբերությունները որոշեցին 1 մ եւ 3 մ բարձրության ոստնակացատկերում, 5 մ բարձրության աշտարակացատկերում: Մրցումներում հատկապես աչքի ընկան Աննա Այվազյանը, Ռիմա Հակոբյանը, Արշակ Վասիլյանը, Կարեն Պետրոսյանը (բոլորը Արաբկիրի համայնքի մարզադպրոցի սաներ են), ինչպես նաեւ Ավետիք Կարապետյանն ու Երիկ Ավետիսյանը (Դ. Համբարձումյանի անվան մարզադպրոց):

Ինչպես առաջնությունից հետո նշեց հանրապետության հավաքականի ավագ մարզիչ Ռոբերտ Գրիգորյանը, մարզաձեւում դրական տեղաշարժեր են նկատվում: Տեւական նահանջից հետո կրկին շատացել են ջրացասկով պարապող երեխաները, բարձրացել է մեր պատանի մարզիկների մակարդակը: Պրն Գրիգորյանն առանձնահատուկ նշեց լողավազանների աշխատողների աշխատանքը: Նրանց ջանքերով է, որ մարզաբազաներում հնարավոր է դարձել լիարժեք պարապմունքներ, մրցումներ անցկացնելը: Սակայն պետք է ընդլայնել մարզաձեւի աշխարհագրությունը, չբավարարվել միայն մայրաքաղաքով: Չափազանց կարեւոր է միջազգային մրցումներին մասնակցելը (հրավերներ ենք ստացել մասնակցելու առաջիկայում կայանալիք Ուկրաինայի պատանեկան բաց առաջնությանը, ինչպես նաեւ Գերմանիայում անցկացվելիք միջազգային մրցաշարին): Ջրացասկն անընդհատ փոփոխվում է կատարելագործվում են տեխնիկան, կանոնները, մարզագույքը: Պետք է ետ չմնալ առաջընթացից: Այո, չափազանց կարեւոր են այլ երկրների ներկայացուցիչների հետ շփումները: Դրանք ոչ միայն նպաստում են հանրապետության երիտասարդ մարզիկների վարպետության աճին, այլեւ շատ օգտակար են մեր մարզիչների համար:

ՇԱՇԿԻ

Չեմպիոնը Ռուբեն Խաչիկյանն է

Ավարտվեց ռուսական (64 վանդականոց) շաշկու Հայաստանի առաջնությունը: ՀՇԿՏ-ում ընթացած մրցումներին մասնակցեցին Երեւանը, Արարատը եւ Տաշիրը ներկայացնող 14 մարզիկներ:

Ինչպես եւ սպասվում էր, չեմպիոնի կոչման համար պայքարն ընթացավ կոչումով ավագների՝ սպորտի վարպետներ Ռուբեն Խաչիկյանի եւ Մարատ Պուլյանի միջեւ: Մրցակցությունն ավարտվեց Հայաստանի բազմակի չեմպիոն Խաչիկյանի հաղթանակով: Շահելով 11 հանդիպում եւ 2 խաղ ավարտելով ոչ-ոքի՝ նա վաստակեց 12 միավոր եւ գրավեց առաջին տեղը: Երկրորդ տեղը գրավեց Պուլյանը, որը հաղթողից ետ մնաց մեկ միավորով: Երրորդ մրցանակակիր դարձավ վարպետության թեկնածու Արտակ Հակոբյանը՝ 9 միավոր: Հաջորդ տեղերում են Վալերի Բայցալովը, Նշան Ալավերդյանը եւ մրցաշարի մասնակից-գեղեցիկ սեռի երկու ներկայացուցիչները՝ Անահիտ Վանյանը եւ Հայկանուշ Բալայանը:

ՇԱԽՄԱՏ

Ութ տուր է անցկացվել

Իսպանիայի Օրոպեզա դե Մար քաղաքում ընթանում է մինչեւ 18 տարեկան շախմատիստների աշխարհի առաջնությունը: Միաժամանակ 10 մրցաշար է անցկացվում՝ մինչեւ 10, 12, 14, 16, 18 տարեկան տղաների եւ աղջիկների խմբերում: Հայաստանից առաջնությունում հանդես են գալիս 9 շախմատիստներ (մեր հանրապետությունը մասնակից չունի միայն 16 տարեկան տղաների մրցաշարում):

Այժմ, երբ առաջնությունում 8 տուր է անցկացվել, Հայաստանի ներկայացուցիչներից լավագույն արդյունքն ունի ամենակրտսերների՝ 10 տարեկան աղջիկների խմբում հանդես եկող Նունե Դարբինյանը: Նունեն հաջող սկսեց մրցաշարը եւ այժմ 6 միավորով գտնվում է առաջատարների քվում: Նույն տարիքային խմբի տղաների մրցաշարում հանդես եկող Հրանտ Մելքումյանը 5 միավոր է վաստակել: Իսկ ահա թե ինչպիսին են մեր մյուս մասնակիցների արդյունքները ըստ տարիքային խմբերի. 12 տարեկաններ – Անահիտ Խաչատրյան՝ 4, Արսեն Նաղդալյան՝ 5, 14 տարեկաններ– Սիրանուշ Անդրեասյան՝ 5,5, Բենիկ Գալստյան՝ 5, 16 տարեկաններ–Լիլիթ Գալստյան՝ 5, 18 տարեկաններ–Նոնա Մահակյան՝ 4,5, Տիգրան Քոքանջյան՝ 3,5 միավոր:

Առաջնության ավարտին 3 տուր է մնացել, եւ հաջող վերջնագծի դեմքում մեր պատանի շախմատիստներից մի քանիսը կարող են բարձր տեղեր զբաղեցնել:

Մենամարտեր «Բերսի» մարզադպրոցում

Հենց նոր ավարտված Շտուտգարտի խոշոր մրցաշարին անմիջապես հաջորդեց նորը՝ Փարիզի բաց առաջնությունը: Այն բավականին խոշոր մրցանակային հիմնադրամ ունի՝ 2,3 մլն դոլար: Ֆրանսիայի մայրաքաղաքի հանրահայտ «Բերսի» մարզադպրոցում ընթացող «Սուպեր-9» շարքի այս մրցումներում հանդես են գալիս 48 թենիսիստներ, որոնց թվում կան նաեւ համաշխարհային դասակարգման առաջին տասնյակի ներկայացուցիչներ:

Առաջին փուլում անցկացված հանդիպումներից նշենք հետեւյալները: Մարատ Սաֆինը (Ռուսաստան) հաղթեց Սարիան Զաբալեսային (Արգենտինա) 6-7, 7-5, 6-3, Անդրեյ Մեդվեդեւը (Ուկրաինա)՝ Գիյոմ Ռաուին (Ֆրանսիա) 6-3, 6-4, Մարկ Ֆիլիպուսիսը (Ավստրալիա) Նիկոլա Էսկյուդեին (Ֆրանսիա) 6-4, 7-6, Մայքլ Չանգը (ԱՄՆ)՝ Թոմաս Յուհանսոնին (Շվեդիա)՝ 6-7, 7-5, 6-4, Ֆաբրիս Սանտորոն (Ֆրանսիա)՝ Ռայներ Շուլերին (Գերմանիա) 6-2, 6-3: Հաջորդ փուլ են մտել նաեւ Ջիմ Կուրյեն (ԱՄՆ), Ալբերտ Կոստան (Իսպանիա), Լլեյտոն Հյուիտը (Ավստրալիա): Վերջինս իր հաջորդ խաղում հանդիպելու է ռուսաստանցի Եվգենի Կաֆելնիկովի հետ: Կաֆելնիկովը եւ աշխարհի թիվ մեկ թենիսիստ Անդրե Աղասին (ԱՄՆ) իրենց ելույթները կսկսեն երկրորդ շրջանից:

Հարկ է նշել, որ այստեղ վերջնականապես կորոշվեն պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի (ATP) շարքի եզրափակիչ մրցումների բոլոր մասնակիցները:

Անակնկալներ առաջին փուլում

Կոլորադո Սփրինգզ քաղաքում անցկացվեց գեղասահքի համաշխարհային «Մեծ մրցանակ» շարքի անդրանիկ «Սթեյթ Ամերիկա» մրցաշարը:

Նախորդ մրցաշրջանի հերոսները Ռուսաստանի գեղասահորդները, անհաջողության մատնվեցին: Նրանք միայն մեկ հաղթանակ տարան: Այն բաժին հասավ աշխարհի չեմպիոն Ալեքսեյ Յագուդինին, որը մենասահորդների լարված մրցակցությունում առաջ անցավ ամերիկացի պատանի Թիմոթի Գեյբլից: Նշենք, որ վերջինիս ցատկերը մասնագետների եւ մարզասերների վրա ուժեղ տպավորություն գործեցին: Մենասահորդուհիների մրցումներում բարձր տեխնիկայով փայլեց Միշել Կվանը (ԱՄՆ): Նա երկրորդ եւ երրորդ տեղերում թողեց Ռուսաստանի ներկայացուցիչներ Յուլյա Սոլդատովային եւ Ելենա Սոկոլովային:

Շատ անակնկալ էին զույգերի մրցումների արդյունքները: Սպորտային զույգերի պայքարում Ֆավորիտները ռուսաստանցի Ելենա Բերեժնայան եւ Անտոն Սիխարուլիձեն, միայն երրորդն էին: Իսկ հաղթեց Ժանի Սալե-Դավիդ Պելետյե զույգը (Կանադա): Պարային զույգերի մրցումներում շատերի համար անսպասելիորեն առաջին տեղը գրավեցին երիտասարդ իտալացիներ Բարբարա Ֆուզերգալին եւ Մաուրիցիո Մարգալիոն: Ի դեպ, նրանց մարզիչը հանրահայտ Տատյանա Տարասովան է: Հաղթողները իրենցից ետ թողեցին ռուսական Իրինա Լոբաչովա-Իլյա Ավերբուխ զույգին:

ԼՈՒՐԵՐ

Բոնցֆամարտի ընտրական մրցաշարեր

Բուխարեստում մեկնարկել են 2000 թ. Սիդնեյի օլիմպիական խաղերի եւ Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարերը: Հայաստանն այս մրցումներում ներկայացված է 11 բոնցֆամարտիկներով:

Օլիմպիադայի ուղեգրերի համար պայքարող մեր բոնցֆամարտիկներից երեքն արդեն ոնգ են մտել ու հաջողությամբ ավարտել իրենց մենամարտերը: Մրցակիցներին հաղթել են վանածորցի Գագիկ Մարտիրոսյանը (48 կգ ֆաբային կարգ), երեւանցիներ Արամ Ռամազյանը (54 կգ) եւ Արթուր Գեւորգյանը (60 կգ): Աշխարհամասի առաջնության ընտրական մրցաշարի մեր մասնակիցներից մեկը՝ աբովյանցի Գագիկ Անտոնյանը (71 կգ), առաջին իսկ մենամարտում պարտվեց եւ դուրս մնաց պայքարից:

Բասկետբոլային մարաթոնը սկսվեց

Անցած գիշեր մեկնարկեց Բասկետբոլային ազգային ասոցիացիայի (NBA) հերթական՝ 54-րդ առաջնությունը: Մի քանի ամիս տեւող բասկետբոլային մարաթոնում հանդես են գալիս Հյուսիսային Ամերիկայի ուժեղագույն թիմերը: Մասնագետների կարծիքով չեմպիոնի կոչման համար պայքարը կընթանա հիմնականում 6 թիմերի միջեւ: Բարձր տիպոսին հավակնում են նախորդ առաջնության հաղթող «Սան Անտոնիո սփերզը», «Լոս Անջելես լեյքերզը» (թիմը գլխավորում է անհաղթ «Չիկագո բուլզի» մարզիչ Ֆիլ Ջեքսոնը), «Արեւելյան» գոտու լավագույն թիմ «Մայամի հիթը», «Պորտլենդը» (Մոթի Պիոթենի եւ Արվիդաս Սաբոնիսի գլխավոր դերակատարմամբ), «Յուտա ջազը» եւ «Ինդիանան», որոնց վետերանների համար սա հաղթանակի վերջին հնարավորությունն է:

Գավաթը՝ Վլադիմիր Սամսոնովին

Սեղանի թենիսիստների աշխարհի գավաթը նվաճեց Բելառուսի ներկայացուցիչ Վլադիմիր Սամսոնովը: Գավաթի խաղարկության վերջին փուլում, որն անցկացվեց Չինաստանում, 22-ամյա մարզիկը հաղթանակը վիճարկեց ավստրիացի Վեռներ Շլագեի հետ: Հանդիպումը երեք խաղափուլում շահելով՝ Սամսոնովը գրավեց առաջին տեղը եւ տիրացավ մրցանակին:

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված խաչբառ-գաղտնագրի պատասխանները

1. Ստեփան: 2. Բոխչագյուլ: 3. Բյոռնսոն: 4. «Զանգեզուր»: 5. «Կարմրաքար»: 6. «Ծիրանի փող»: 7. «Հորիզոն»: 8. Շուշի: 9. Այգեկցի: 10. «Սիրհավ»:

Այստեղ Ե. Չարենցի չափածո նամակն է՝ ուղղված Ա. Բակունցին:

Իմ սիրելի Ակսել, չեմ մոռացել
ես քեզ...
Սիա նստած այստեղ, այս
խստաշունչ հեռվում,
Մտաբերում, հիշում,
ու, տես- գրում եմ ես
Քեզ հանգավոր նամակ:
Այս ափերում...



Ուղղահայաց

1. Գետ Սիջին Ասիայում, թափվում է Արալյան ծովը: 2. Հայ ազատագրական գաղտնի բանակ: 3. Քաղաք եւ նավահանգիստ Ինդոնեզիայում: 4. Քանդակագործ Լ. Թորոսյանի ստեղծագործություններից: 7. Հայազգի ծովակալ: 8. Խեցե ամանները ներսից երեսապատելու ածգործություններից: 10. Հայ նկարիչ: 11. «Արարատը եւ Արաքս գետը» կտավի հեղինակը: 13. Ռուսական բալետի պարուհի: 14. Հունական արշիպելագ էգեյան ծովում: 21. Ռուս ֆանտաստ գրող: 22. Հայազգի ամերիկյան աստղագետ: 23. Հույն ճարտարապետ: 24. Ռուսական էստրադայի աստղ: 28. Նորաձեւության ամսագիր: 29. Հրեաների գերագույն Աստվածը:

Հորիզոնական

5. Նորվեգացի բեւեռախույզ: 6. Ամերիկահայ կինոռեժիսոր: 9. «Վոլգա-Վոլգա» երաժշտական կինոկատակերգության հեղինակը: 12. Ըստ հունական դիցաբանության Զեւսի եւ Կալիստոյի որդին, որին Արտեմիսը վերածել էր արջի: 15. Հրվանդան, որը հայտնագործել է պորտուգալացի ծովագնաց Դինիզ Դիասը 1445-ին: 16. Լեռնային համակարգ Աֆղանստանի հյուսիս-արեւմուտքում: 17. Նյութական մեծ կարողություններ: 18. ԱՄՆ-ի Նյու Յորք նահանգի վարչական կենտրոնը: 19. Իրանում ղեկավար անձ: 20. Հայ գրող: 25. «Բաթուտիներ» դրամայի հեղինակը: 26. Լեռնային երկրամաս Ասիայում: 27. Կանաչի, համեմունք: 30. Հնում չամուսնացած, կրթված, ազատ վարք ու բարքի տեր կին: 31. Ըստ հունական դիցաբանության ծովերի աստվածը: 32. Մարզկենտրոն Ռուսաստանում:

Կազմեց է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Չեչնիայից մինչեւ Հայաստանի խորհրդարանը

Բրիտանական փորձագետը Մեծ Կովկասի իրադարձությունների մասին

ՕՍԼՈ, 2 ՆՈՅԵՄԲԵՐ, ՄՆՄՐ: Շատ փորձագետներ կաղ են տեսնում Չեչնիայի պատերազմի, Հայաստանի խորհրդարանում տեղի ունեցած կոտրածի եւ Վրաստանի նախագահի դեմ մահափորձերի միջեւ, գրում է «Մոնդը»:

Մոսկվան ձգտում է պահպանել իր գերիշխանությունը Կովկասում: Դավադրության տեսություններին առնչվող գլխավոր խնդիրը Կովկասի նկատմամբ կիրառելի է այն առումով, որ դրանք, մեծ մասամբ, համապատասխանում են իրականությանը, ենթադրում է բրիտանացի փորձագետ Դենիս Սեմը:

Նոր մեծ խաղ է ծավալվել Կասպից ծովի հարստությունների շուրջ: Վրաստանի արտաքին քաղաքականության գծով խորհրդարանական հանձնաժողովի նախագահը նշել է, որ թեեւ ինքը չի ցանկանում որեւէ մեկին կասկածել առանց որոշակի ապացույցների, այնուամենայնիվ, Հայաստանի վարչապետ Վազգեն Սարգսյանն սպանվեց այն պահին, երբ սկսել էր իրեն անկախ պահել, համակարգել Վրաստանի հետ տարածաշրջանային քաղաքականությունը եւ լուրջ օփումներ հաստատել Պենտագոնի հետ:

Հայաստանի նախագահ Քոչարյանը, ի զարմանս ռուսների, վերջին ամիսներին մի քանի անգամ հանդիպեց Ադրբեջանի իր պաշտոնակից Ալիեւի հետ: Վերջինս, ամենաբարի խոսքեր ուղղելով Կրեմլի հասցեին, միաժամանակ առաջ է տանում Թուրքիայով նավթատարի կառուցման նախագիծը: Այժմ կորված է տարածաշրջանային ինտեգրացման Հայաստանի փորձ հնարավորությունը: Երկար ժամանակ ոչ ոք որեւէ բանակցություն չի վարի, ասում է բրիտանացի փորձագետը:

Եվրոպան սխալվում է, կարծելով, թե Ռուսաստանն առանց ավելորդ աղմուկի կճնճի Չեչնիային, եւ գործը դրանով կավարտվի: Անխուսափելի է պատերազմի տարածումը Վրաստան: Դա միայն ժամանակի հարց է, ասում է Դենիս Սեմը: Կրեմլն այդպես էլ չի հաշտվել այն բանի հետ, որ Շեւարդնաձեն ցանկանում է իր երկիրը դուրս բերել քառսից կասպիական նավթի փոխադրման արեւմտյան նախագծերի օգնությամբ՝ շրջանցելով Ռուսաստանը:

Չեչեն գրոհայիններ նահանջում են նախալեռնային շրջաններ

ՄՈՍԿՎԱ, 2 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Չեչեն գրոհայինների հիմնական ուժերը շարունակում են նահանջել հանրապետության նախալեռնային շրջաններ, Մոսկվայից հաղորդում է Փրայմ նյուսի սեփական թղթակիցը, վկայակոչելով Ռուսաստանի պաշտպանության նախարարության մամլո ծառայությունը: Ռուսաստանի ռազմական գերատեսչության տվյալներով, Գրոզնու մատույցներում շրջանածեւ պաշտպանության նախապատրաստվող ելուզակները նավթով եւ մազութով լի ցիստեռնները, հեղուկ ազոտով տարողությունները բացել են գազի տակ եւ ավանդատուն:

Ինչպես նշվում է պաշտպանության նախարարության մամլո ծառայության հաղորդման մեջ, Գրոզնի են շարունակում ժամանել վարձկաններ տարբեր երկրներից: Միայն վերջին օրերին, զինվորականների տվյալներով, Չեչնիա են ժամանել «Արաբական ազգային բանակի» մի քանի տասնյակ մարտիկներ, մոտ 20 ծայրահեղականներ «Իսլամի պաշտպանության ճակատ» կազմակերպությունից:

Թուրքիայում գործող «Կովկասյան ընկերությունը» Չեչնիայի համար կազմում է ծայրահեղականների մի ջոկատ (մոտ 300 մարդ)՝ Կոսովոյի ռազմական գործողությունների մասնակիցներից, հայտարարում է Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը:

Ռուսաստանի եւ Թուրքիայի վարչապետները կդատապարտեն ահաբեկչությունը

ՄՈՍԿՎԱ, 2 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի եւ Թուրքիայի կառավարությունների ղեկավարները Վլադիմիր Պուտինը եւ Բյուլենթ Էջեւիթը հանդես կգան ահաբեկչությունը դատապարտող համատեղ հայտարարությամբ, հավաստելով երկու երկրների վճռականությունը՝ կիրառելու միջազգային հակաահաբեկչական կոնվենցիաները: Այդ մասին այսօր ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հայտնի է դարձել դիվանագիտական հրազեն աղբյուրներից:

Հայտարարությունը հրապարակվելու է Թուրքիայի վարչապետի նոյեմբերի 4-6-ը Մոսկվա ծեռնարկելիք պաշտոնական այցի ընթացքում:

Երկու երկրների կառավարությունների ղեկավարները մտադիր են ընդգծել, որ «ահաբեկիչները ոչ մի տեղ չպետք է ապաստան ստանան, հնարավորություն չպետք է ունենան օգտագործելու ահաբեկչական նպատակների համար, այդ թվում՝ ռազմահանգրվանների, վարժական ճամբարների տեղաբաշխման, զենքի, ռազմական հանդերձանքի փոխադրման, դրամական միջոցների հանգանակման եւ քարոզչական միջոցառումների իրականացման համար»:

Շեւարդնաձեի կուսակցությունն առջեւում է

ԹԲԻԼԻՍԻ, 2 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ: Վրաստանի ԿԽ-ն հրապարակել է հոկտեմբերի 31-ին անցկացված Վրաստանի խորհրդարանի ընտրությունների նախնական արդյունքները:

Երկրում կառավարող «Վրաստանի քաղաքացիների միություն» կուսակցությունը, որը գլխավորում է երդուող Շեւարդնաձեն, հավաքել է ձայների 42,21 տոկոսը. «Վրաստանի ժողովրդավարական վերածննդի միություն» ընդդիմադիր դաշինքը (գլխավորում է Աջարիայի Ինքնավար Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Ասլան Աբաշիձեն)՝ 26,45 տոկոսը:

Առայժմ ոչ մի այլ քաղաքական կուսակցություն կամ ընտրադաշինք չի հավաքել ընտրողների ձայների 7 տոկոսը, որն անհրաժեշտ է խորհրդարանում ներկայացվելու համար: Սակայն ձայների հաշվառումը շարունակվում է, եւ Վրաստանի խորհրդարանի ընտրությունների վերջնական արդյունքները կհրապարակվեն շաբաթվերջին: Բացառված չէ, որ բոլոր ընտրատեղամասերից տեղեկություններ ստանալուց հետո մեկ կամ երկու կուսակցություն կհաղթահարեն 7-տոկոսանոց արգելքը: Դրան ամենից մոտ են Վրաստանի լեյբորիստական կուսակցությունը, որն ըստ նախնական տվյալների հավաքել է ձայների 6,85 տոկոսը, եւ «Արդյունաբերությունը կփրկի Վրաստանը» ընտրադաշինքը, որի ակտիվում է ձայների առայժմ 6,75 տոկոսը:

Ընտրություններին մասնակցել է ընդամենը 1 մլն 964 հազար մարդ, բոլոր ընտրողների 67,76 տոկոսը:

Հայաստանի ամերիկյան համալսարանի հասուկ դասընթացների բաժին

Գործարար հաղորդակցություն անգլերենով

Դասընթացում կքննարկվեն գործարար աշխարհում օգտագործվող հաղորդակցման ձեւերը, գործարարության տպագրական մշակութային կանոնները եւ սովորական գործարար իրավիճակներում: Կուսուցանվեն աշխատանքային երկխոսություններ նախաձեռնելու, մեծ եւ փոքր խմբակային հանդիպումներ ղեկավարելու եւ դրանց էֆեկտիվորեն մասնակցելու հմտություններ: Մասնակիցները կծանոթանան նաեւ ամերիկյան խոսելաձեւերին, դարձվածքներին եւ աշխատանքային իրավիճակներում կիրառվող արտահայտություններին:

տեւողությունը՝ *նոյեմբերի 15-ից մինչեւ դեկտեմբերի 14-ը*
երկուշաբթի, երեքշաբթի եւ հինգշաբթի օրերին,
ժամը 16.30-18.30
վարձը՝ *50 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ ԱԱՀ)*

TOEFL քննության նախապատրաստական դասընթաց

Դասընթացն ուսանողներին պատրաստում է TOEFL քննություն հանձնելուն: Նրանք կարող են ձեռք բերել TOEFL թեստի լսելու եւ հասկանալու, ընթերցանության, կարդալու եւ հասկանալու բաժինների հարցերին պատասխանելու օգտակար գիտելիքներ եւ հմտություններ, հարցադրումների կողմնորոշում, քննություն հանձնելու ռազմավարություն, ինչպես նաեւ գործնական թեստեր հարցերով եւ բացատրություններով: Հնարավորություն կտրվի նաեւ աշխատել համակարգչով TOEFL թեստի օրինակների վրա:

տեւողությունը՝ *նոյեմբերի 22-ից մինչեւ դեկտեմբերի 22-ը*
երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին,
ժամը 14.00-17.30
վարձը՝ *95 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ ԱԱՀ)*

Անգլերենը աշխատանքում

Դասընթացը նախատեսված է նրանց համար, ում անհրաժեշտ է անգլերենը աշխատանքի վայրում, կամ ովքեր նախատեսում են աշխատանք գտնել անգլերենը սովորելուց հետո: Դասընթացը օգտակար է նաեւ գործարար ուսումնասիրություններ կամ ճանապարհորդություններ կատարելիս: Այն նախատեսված է սկսնակների համար:

տեւողությունը՝ *նոյեմբերի 30-ից մինչեւ մարտի 16-ը*
երեքշաբթի եւ հինգշաբթի օրերին եւ շաբաթ օրը ժամը 15.00-17.00
վարձը՝ *130 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ ԱԱՀ)*
ուշադրություն՝ *1999 12 24-ից ներառյալ 2000 01 07 դասեր տեղի չեն ունենա:*

- *Դասընթացների գրանցումը եւ վճարումը տեղի կունենան Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) 19 ա սենյակում, ժամը 9.00-ից մինչեւ 17.45*
- *Յուրաքանչյուր դասընթացում կընդգրկվեն առավելագույնը 15 դիմորդներ*
- *Դասընթացներում ընդգրկվելու համար դիմորդները պետք է հանձնեն անգլերեն լեզվի քննություն նոյեմբերի 8-ին, ժամը 13.00 ՀԱՀ փոքր դահլիճում:*

Լրացուցիչ տեղեկություններ համար դիմել
ՀԱՀ-ի 19-ա սենյակ, ժամը 9.00-ից մինչեւ 17.45 կամ զանգահարել 27-16-58

Հայաստանի ամերիկյան համալսարանի հասուկ դասընթացների բաժին

խաղաղագիտության դոկտոր

Արմեն Կռաֆյանը

ներկայացնում է

Հայաստանի սոցիալական բարեփոխումը. դեպի նոր ազգային համակարգ
Երկուշաբթի, նոյեմբերի 8-ին, ժամը 18:00-ին

Հայոց ցեղասպանությունը վառ օրինակ մարդկության համար
Երեքշաբթի, նոյեմբերի 9-ին, ժամը 18:00-ին

Սփյուռք-հայրենիք հարաբերությունները 21-րդ դարի նախաշեմին
Չորեքշաբթի, նոյեմբերի 10-ին, ժամը 18:00-ին

թեմաներով դասախոսությունները

Դասախոսությունները կընթանան անգլերենով, համընթաց հայերեն թարգմանությամբ.

Հայաստանի ամերիկյան համալսարանի փոքր դահլիճում:

Մուտքն ազատ է

☎ *Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 27-16-58*

Agricultural Potential Analysis and Training Needs Assessment

The Integrated Food Security Program South Armenia, in cooperation with the agricultural department of the **Sjunik Province Administration**, wants to undertake an analysis of the agricultural potential of Sjunik as well as a training needs assessment of Sjunik farmers.

Interested companies are invited to take part in this exercise and can obtain terms of reference for the study at IFSP SA's **Yerevan office at 4-th st. Erkatughainneri, Hs. 6, Yerevan 375 041, Tel. 45 36 53, AT&T 151 641.**

Technical as well as financial proposals are to be submitted to **IFSP SA Yerevan office not later than Tuesday, 2-nd November 1999.**

ՀԵՌՈՒՏԱՑՐԱԳԻՐ

3 Նոյեմբեր

17.00 Հայլուր
17.20 Սուտ
17.45 Մուլտֆիլմ «Հովտի տնակը»
18.00 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
19.00 Ռուբիկոն
19.30 Հեռուստասերիալ «Կրեր»
20.00 Այսօր
20.20 Արտակարգ ալիք
20.35 Տունտունիկ
21.00 Հայլուր
21.40 Հեռուստակտալոգ
21.50 Հայաստանի առաջին հանրապետություն
22.10 Օիծաղի տուն
23.05 Մարդու իրավունքները Հայաստանում. բանտարկյալներ
23.40 Հենց այնպես
00.00 Հայլուր
00.20 Կեսգիշերային ծեծոնքաց
01.20 Ռուբիկոն+

Պրոմեթեւս

9.05 Վաղ առավոտյան
10.05 Մուլտֆիլմ
10.20 Սերիալ «Կանանց աշխարհը» (2-րդ մաս)
11.15 Ծանոթ-անծանոթը
11.45 Տեսաֆիլմ «Նորավանք»
12.00 Լուրեր
18.00 Լուրեր
18.20 Մուլտֆիլմ
18.35 Վավ. սերիալ «Բնությանը պահպան» (3-րդ մաս)
19.00 Տեսաֆիլմ «Վերածնունդ»
19.35 Արամ Իսպանկյանի ցուցահանդեսում
20.00 Երաժշտական ծրագիր «Սոլի բանալի»
20.30 Լուրեր
21.00 Սերիալ «Կանանց աշխարհը» (3-րդ մաս)
21.55 Մոսկվան եւ ընկ
22.40 Ռեւ երեկոյան
23.25 Գ/Ֆ «Կինը, որին նա սիրում է»
01.00 Լուրեր
01.20 Գ/Ֆ «Սոդելու իրավունք»

9.00 Տոմար
ավարտին Ավետա (կրկնություն)
19.00 «Շղթին» ներկայացնում է բնաբխարհ
19.30, 21.30, 23.30, 2.30 Սուրհանդակ
19.50 Մամուլի խոսնակ
20.00 Գիտաստեր
20.30 Կամ... կամ
21.10 Շղթին
21.50 Գ/Ֆ «Տղամարդկանց շրջադարձ»
24.00 Սնոդեր
0.05 Երաժշտական դադար
0.10 Սուր սենյակ
0.30 Ֆասոն (Fasion ծրագրի շաբաթվա ընտրանի)
0.55 Գ/Ֆ «Իսկական ամերիկացիները»

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
16.00 Նորություններ
16.20 Սերիալ «80 օր աշխարհի շուրջը»
16.45 Հրաշալի ընկերախումբ
17.00 Ցունամիների կանչը
17.30 Մինչեւ 16 եւ բարձր
18.00 Սերիալ «Բնության ոգին»
19.00 Նորություններ
19.25 Դիմակներ տոմ
20.00 Սարդը եւ օրենքը
20.45 Դետեկտիվ «Պատրիարքների անկումը»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
23.00 Գ/Ֆ «Ճակատագրական ծվեր» (դերերում Օ. Յանկովսկի, Գ. Սուկաչով, Ն. Ուստինովա, 1995 թ.)
01.15 Ա. Գորդոն «Սոլորությունների ժողովածու»
01.45 Նորություններ
02.05 Գ/Ֆ «Իշխանության Սենայի ծառանին» (դերերում Ե. Մասալովսկի, Կ. Սարոնով կի, Վ. Կվասնեւսկա, Լենֆիլմ, 1971 թ.)

7.30-10.20 Բարի լույս, Ռուսաստան
8.00, 9.00, 10.00 Լուրեր
9.15 Հերթապահ բաժանումներ
10.20 Հոմեոպատիա եւ առողջություն
10.30 Հեռուստահանդես «Արենա սոդոս»
11.00 Հոմեոպատիա եւ առողջություն
11.10 Սերիալ «Գնչուհին»
12.00 Սերիալ «Մեր գաղտնիքի ամաթը»
13.00 Կինոնկար-հեքիաթ «Լինում է, չի լինում մի թագավոր» (2-րդ սերիա)
13.50 Հոմեոպատիա եւ առողջություն
14.00, 18.00, 20.00, 22.00 02.00 Լուրեր
14.20 Մուլտֆիլմ «Պինոկիոյի արկածները» (1-ին սերիա)
15.15 Սերիալ «Անտոնելա»
16.10 Սերիալ «Վայրի հրեշակը»
17.00 Խանութ բազմոցի վրա
17.30 Սուլտանգազիր
18.20 Աշտարակ
18.55 Սերիալ «Կոմիսար Ռեքսը»
20.30 Ռուսական սերիա «Մահվան դիրեկտորիա»
21.25 Ինձ հեզ սեղմեք
22.45 Կինոյի ժամ. Ջիմ Ռոբինսը եւ Սորգան Ֆրիմենը «Փախուստ Շոուշենկից» (հեռակա դատապարտում ԱԱՄՆ)
01.15 «Ընտրություն» կենտրոնական ընտրական կոմիտեի օրագիրը
01.30 Հրատարակախոսական թոք-շոու «Ժողովուրդն ուզում է իմանալ»
01.45 Հերթապահ բաժանումներ
02.20 Խանութ բազմոցի վրա

ՍՓՅՈՒՌ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (590000), տեղեկագրքով (1800 դրամ), սկավառակով (3500 դրամ), INTERNET ցանցով (www.arminco.com/spyur; spyur.acc.am; armscape.com/spyur)

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2, Գրանցման թիվ 65, Դասիչ 69149, Պատվեր 1145, Տպաքանակը 4000, Ստորագրված է տպագրության՝ 2.11.1999, Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@